

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

Բանալի բառեր – Սիմոն Վրացյան, Կարո Սասունի, Կուռո Թարխանյան, մեծամասնական, էսէռ, բռնագրավում, ձերբակալություն, Արտակարգ հանձնաժողով, պարենավորում, ռադիո, հաղորդակցություն, տնտեսության կարգավորում, արդարադատություն, գորակոչ, բանակ, ապստամբություն, «Ազատ Հայաստան» թերթ:

Ներկա հրապարակման մեջ առաջին անգամ ներկայացվում են 1921 թ. Հայրենիքի փրկության կոմիտեի նիստերի արձանագրությունները, որոնք կարող են լրացուցիչ լույս սփռել անկախ Հայաստանում այդպես էլ գիտական լուրջ ուսումնասիրության չենթարկված՝ Փետրվարյան ապստամբության պատմության բազմաթիվ անհայտ էջերի վրա:

1921 թ. Փետրվարյան ապստամբության պատմությունը մինչև այժմ հիմնականում եղել է սփյուռքահայ պատմաբանների, առաջին հերթին՝ դաշնակցական հեղինակների ուշադրության առարկան: Սակայն փաստաթղթերի սակավության պատճառով Սփյուռքում ուսումնասիրվել են սոսկ նրա առանձին ասպեկտները, իսկ ինչ վերաբերում է Հայաստանին, ապա այս հիմնախնդրի գիտական հետազոտության առաջադրանքը մինչ օրս մեզանում շարունակում է բախվել օբյեկտիվիզմի շինծու քողի տակ թաքնվող խորհրդային մտածողության քարացած կաղապարներին: Մինչդեռ Հայաստանի երրորդ հանրապետությանը սպառնացող ներքին ու արտաքին մարտահրավերների համապատկերում ներկայումս գնալով ավելի ու ավելի է ընդգծվում 1921 թ. Փետրվարյան ապստամբության ուրույն տեղը հանուն ազատության և անկախության հայ ժողովրդի մղած պայքարի տարեգրության մեջ:

Առաջին Հանրապետության վերջին վարչապետ Սիմոն Վրացյանի նախագահությամբ ստեղծված պետական իշխանության արտակարգ նոր մարմինը՝ Հայրենիքի փրկության կոմիտեն, 1921 թ. փետրվարի 18-ին տեղի ունեցած իր առաջին նիստից սկսած, պետք է իրականացներ երկրի

*Ընդունվել է տպագրության 2.02.2015:

կառավարման գործառնությունները մինչև կառավարության ձևավորումը: Նրանում կառավարման ոլորտի պատասխանատուների պաշտոնները կոչվում էին նախարարներ կամ վարիչներ: Ս. Վրացյանը նախագահի հետ միասին ստանձնեց նաև արտաքին գործերի և գյուղատնտեսության նախարարի պաշտոնը: Իսկ ողջ կոմիտեն ուներ հետևյալ կազմը՝ 1. Արշակ Հովհաննիսյան – զինվորական գործերի վարիչ, 2. Կարո Սասունի – ներքին գործերի վարիչ, 3. Համբարձում Տերտերյան – ֆինանսական գործերի վարիչ, 4. Հակոբ Տեր-Հակոբյան – պարենավորման գործերի վարիչ (նրան հետո փոխարինեց Վահան Մինախորյանը), 5. Սմբատ Եղիազարյան – խնամատարության գործերի վարիչ, 6. Հայկ Սարգսյան – աշխատանքի և ագիտացիայի գործերի վարիչ, 7. Արշամ Խոնդկարյան – հանրային կրթության և արվեստի գործերի վարիչ: Սահակ Տեր-Թովմասյանը ՀՓԿ քարտուղարն էր, իսկ Ամենայն հայոց բանաստեղծի որդի Համլիկ Թումանյանը՝ գործերի կառավարիչը: ՀՓԿ անդամներ ընտրվեցին Եփրեմ Սարգսյանը, Ռուբեն Քաջբերունին, Հովակիմ Բուդաղյանը, Թադևոս Խանադյանը, Արմենակ Մաքսապետյանը, Սերգեյ Մելիք-Յուլյանը և Ս. Մեսրոպյանը: ՀՓԿ զինված ուժերի ընդհանուր հրամանատարը Կոռո Թարխանյանն էր: ՀՓԿ-ն իր աշխատանքներն ավելի արդյունավետ և օպերատիվ դարձնելու նպատակով ձևավորեց նախագահություն, որի կազմում Ս. Վրացյանից գատ ընդգրկվեցին միմիայն զինվորական, պարենավորման և ներքին գործերի վարիչներն ու Արտակարգ հանձնաժողովի նախագահը: Հատկանշական է, որ ՀՓԿ-ի իշխող քաղաքական ուժ ՀՅԴ-ն, երկրի շահերից ելնելով, դաշինքի գնաց սոցիալիստ-հեղափոխականների հետ՝ իր կազմում ընդգրկելով Վ. Մինախորյանին և Ա. Խոնդկարյանին, իսկ փետրվարի 24-ին ստեղծվեց միջկուսակցական խորհուրդ:

ՀՓԿ-ի ռազմաքաղաքական և վարչական իշխանությունը տարածվում էր Էջմիածնի, Աշտարակի, Դամարլուի (այժմ՝ Արտաշատ), Այստայի (այժմ՝ Հրազդան), Նոր Բայազետի (այժմ՝ Գավառ) և Երևանի շրջաններում: Տեղերում իշխանության համապատասխան մարմիններն էին գավառային և շրջանային Փրկության կոմիտեները:

Արտակարգ և օրհասական պայմաններում ստեղծված ՀՓԿ-ի գործունեության հիմնական ուղղությունները, գերակա առաջնահերթություն ունենալով երկրի պաշտպանունակության ամրապնդումը և տիրող տնտեսական ձգնաժամի հաղթահարումը, ըստ նիստերում քննարկված հարցերի և ընդունված որոշումների կարելի է դասակարգել հետևյալ ոլորտների.

Ա. ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ: 1. Զինվորական նախարարությանը պարբերական վարկերի տրամադրում, 2. զորակոչի կազմակերպում և բոլոր սպաների խստացված հաշվառում ու պարտադիր զինծառայության մեջ ներառում, 3. զինվորական աստիճանների վերացում և նրանց ըստ պաշտոնների դիտարկում, 4. զինվորների պարենավորման գործի ապահովում և միանվագ նպաստի տրամադրում, 5. ՀՓԿ-ի կողմն անցած բոլշևիկյան զինծառայողների ներում և կյանքի անձեռնմխելիության երաշխավորում:

Բ. ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ: 1. Արտակարգ հանձնաժողովի ստեղծում, 2. քաղաքային ինքնավարությունների վերացում և քաղաքապետարանի կազմում, 3. Երևանում հանրային կարգի ապահովման կարգավորում, 4. փոստ-հեռագրատան և ռադիոկայանների աշխատանքի կարգավորում, 5. բոլշևիկների ստեղծած ավելորդ կառավարչական կառույց-

ԱՐԽԻՎ

Է (ԺԳ) քաղի, թիվ 1 (49) հունվար-մայր, 2015

ՎԷՆ համահայկական հանդես

ների լուծարում և պաշտոնյաների թվի հասցնումը նվազագույնի:

Գ.ՏՆՏԵՍԱՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ: 1. Բոլոր նախարարությունների կենսագործունեության համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և վարկավորման տրամադրման կարգավորում, 2. հայկական նոր փողերի շրջանառության ապահովում և խորհրդային փողերի գործածության իսպառ վերացում, 3. շուկայի գների կարգավորում, 4. բոլշևիկների բռնագրաված կենսամթերքների պետականացում, իրերի վերադարձ նախկին տերերին, 5. բոլշևիկյան իշխանություններից մնացած վարկերի լուծարում, 6. բոլշևիկների չվճարած աշխատավարձերի և տոնական նվերների տրամադրում:

Դ. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ: 1. Քաղաքացիական կռվի զոհերի թվի պարզման, նրանց ընտանիքներին անմիջական նպաստ հասցնելու նպատակով հանձնախմբի ստեղծում, 2. բոլշևիկների ձերբակալած և սպանած անհատներին-ընտանիքներին աջակցություն, 3. նպաստի տրամադրում կարիքավոր ընտանիքներին, 4. պահեստներում գտնված ալյուրի և կաթի տրամադրում միայն հիվանդանոցներին:

Ե. ՔԱՐՈՉՁԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ: «Ազատ Հայաստան» թերթի հիմնում, 2. ինֆորմացիոն և տպագրական գործի և մամուլի ու պրոպագանդայի վարչությունների ստեղծում, 3. Փետրվարյան ապստամբության վերաբերյալ պատմական տեղեկություններ հավաքելու նպատակով հանձնախմբի ստեղծում, 4. Կուլտուր-պատմական ինստիտուտի գործունեության կարգավորում:

Արձանագրություններից ակնհայտ երևում է, որ իր կարճաժամկետ գոյության ընթացքում՝ ստեղծված ճգնաժամային պայմաններում, գտնվելով արտաքին աշխարհից գրեթե ամբողջական մեկուսացման մեջ, ՀՓԿ-ն, այնուամենայնիվ, կատարել է իր հայրենանվեր աշխատանքը: Ուստի պատահական չէ, որ նրան հաջորդած Ալ. Մյանսիկյանի նոր խորհրդային կառավարությունը, հաշվի առնելով Հայ հեղկոմի քաղաքականության աղետաբեր հետևանքները և Փետրվարյան ապստամբության թողած դասերը, որդեգրեց ավելի շրջահայաց և կառուցողական քաղաքական գիծ:

* * *

ՀՓԿ-ի ունեցած 22 նիստերի արձանագրությունները ժամանակագրական առումով ընդգրկում են 1921 թ. փետրվարի 18-ից մինչև մարտի 31-ը: ՀՓԿ-ի փաստաթղթերը ՀՍԽՀ պետական արխիվ են հանձնվել 1926 թ.: Ֆոնդը փորձաքննության չի ենթարկվել, որովհետև նախ՝ ՀՓԿ ոչ բոլոր փաստաթղթերն են պահպանվել, և երկրորդ՝ դրանք խորհրդային իշխանության տարիների առաջին փաստաթղթերից են եղել, ուստի և եղածները պահվել են մեծ խնամքով: Նկատի ունենալով, որ ֆոնդի փաստաթղթային գործերն անընդհատ շրջանառության մեջ են եղել և հետագայում օգտագործելու դեպքում լուրջ դժվարություններ կառաջանային, ֆոնդի ներսում համակարգում չի կատարված:

Առաջին անգամ «ՎԷՄ» հանդեսում հրապարակվող այս արձանագրությունները պահվում են Հայաստանի ազգային արխիվի «Հայրենիքի փրկության կոմիտե»-ի ֆոնդում (Ֆ. 37): Փաստաթղթերը հրապարակվում են լեզվաժամական առանձնահատկությունների պահպանմամբ և բնագրային հավատարմությամբ: Անհրաժեշտության դեպքում տրվել են հա-

մապատասխան ծանոթագրություններ, կատարվել են ուղղագրական և կետադրական շտկումներ: Խմբագրական հավելումները տրվել են ուղղաձիգ [] փակագծերում:

Անահիտ Զ. Քոչարյան

ԱՐԽԻՎ

PROTOCOLS OF THE SESSIONS OF THE COMMITTEE OF SALVATION OF THE MOTHERLAND

Anahit Z. Kocharyan

Key words – Simon Vratsyan, Karo Sasuni, bolshevik, CHE-KA (Extraordinary commission), jurisdiction, army, rebellion, “Free Armenia” newspaper.

ПРОТОКОЛЫ ЗАСЕДАНИЙ КОМИТЕТА ПО СПАСЕНИЮ РОДИНЫ

Анаит З. Кочарян

Ключевые слова – Симон Врацян, Каро Сасуни, большевик, Чрезвычайная комиссия, правосудие, армия, восстание, газета „Свободная Армения”.

ՀԱՅՐԵՆՆԻՔԻ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԿՕՄԻՏԷԻ
ՆԻՍՏ N. 1¹

1921 թ. փետրվարի 18, Երևան
Ներկայ էին՝
Սիմեոն Վրացեան,
Արշակ Յովհաննէսեան²,
Եփրեմ Սարգսեան³,
Յակովբ Տէր-Յակովբեան⁴,
Համբարձում Տէրտէրեան⁵,
Թադէոս Խանաղեան,
Հայկ Սարգսեան⁶,

է (ԺԳ) քարի, թիվ 1 (49) հունվար-մարտ, 2015

վե՛ր համահայկական հանդես

1 Բոլոր նիստերի արձանագրությունների մեքենագիր պատճենների վերջում կա այսպիսի հղում. «Սոյն պատճէնը ուղարկվում է նախարարութեան ի գիտութիւն և ի կատարումն այն կէտերի, որոնք վերաբերում են նախարարութեանը»:

2 **Հովհաննիսյան Արշակ Հարությունի** (1883, Նուխի-1954) – ազգային-պետական գործիչ: ՀՅԳ անդամ: 1919 թ. ընտրվել է ՀՀ Խորհրդարանի անդամ, 1920 թ. նոյեմբերի 24-դեկտեմբերի 2-ին՝ Հայաստանի Առաջին Հանրապետության Գյուղատնտեսության և պետական գույքի նախարար: Հայրենիքի փրկության կոմիտեի անդամ:

3 **Սարգսյան Եփրեմ Սարտիրոսի** (1886-1970, Լոս-Անջելես) – բանաստեղծ, թարգմանիչ:

4 **Տեր-Հակոբյան Հակոբ Գարրիելի** (1880, գ. Ազնա, Գողթան – 19.06.1953, Թեիրան) – ազգային-պետական գործիչ, բանասեր: Հայտնի է Հ. Իրազեկ անունով: ՀՅԳ անդամ: Եղել է Հայաստանի առաջին հանրապետության Խորհրդարանի անդամ: Հուշերի և բանասիրական աշխատանքների հեղինակ:

5 **Տերտերյան Համբարձում** (1884, գ. Թովստի, Նոր Նախիջևան-1955, Թեիրան) – ազգային-պետական գործիչ: ՀՅԳ անդամ: Եղել է Հայաստանի առաջին հանրապետության Խորհրդարանի անդամ, ապա՝ ֆինանսների նախարար: Լ. Շանթի հետ 1920 թ. Մոսկվայում բանակցել է բոլշևիկների հետ:

6 **Սարգսյան Հայկ Թամրազի** (14.10.1887, Երևան-13.07.1971, Ֆրանսիա) – ձարտարապետ, հրապարակախոս:

Աւետիս Օհանջանեան⁷,
Բժ. [Սմբատ] Եղիազարեան⁸:

Լսեցին.	Որոշեցին.
1. Իշխանութեան կազմակերպման հարցը:	1. Նկատի ունենալով երկրի պատերազմական վիճակը՝ յետաձգել կառավարութեան կազմութիւնը: Երկրի բովանդակ իշխանութիւնը ստանձնում է Հայրենիքի Փրկութեան Կօմիտէն:
2. Հայրենիքի Փրկութեան Կօմիտէի կազմի մէջ էսէրներից ⁹ ներկայացուցիչներ հրաւիրելու հարցը:	2. Սկզբունքով ընդունել էսէրներից երկու ներկայացուցիչներ հրաւիրելու կօմիտէի մէջ:
3. Նախարարությունների վարիչներ նշանակելու հարցը:	3. Ա) Ս. Վրացեան – Հ. Փ. Կօմիտէի նախագահ, Արտաքին գործերի և Գիւղատնտեսութեան նախարարութեան վարիչ, Բ) Ա. Յովհաննէսեան–Ջինուորական գործերի վարիչ, Թ. Խանադեան – օգնական ¹⁰ , Գ) Կ. Սասունի ¹¹ –Ներքին գործերի նախարարութեան վարիչ, Դ) Հմ. Տէրտէրեան–Ֆինանսների նախարարութեան վարիչ, Ե) Յ.Տէր–Յակովբեան–Պարենատրման նախարարութեան վարիչ, Ձ) Բժ.[իշկ] Եղիազարեան–Խնամատարութեան գործերի վարիչ, Է) Հ. Սարգսեան–Աշխատանքի եւ Ազիտացիայի գործերի վարիչ, Ը) Գնդ.[պպետ] Թարխանեան ¹² –Ընդհանուր հրամանատար, Թ) Ս. Տէր–Թովմասեան–Քարտուղար:

Հայրենիքի Փրկութեան Կօմիտէի նախագահ՝ Ս. Վրացեան [ստորագրություն] Քարտուղար՝ Ս. Տէր–Թովմասեան [ստորագրություն]¹²

ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 4, թթ. 4–2ըջ.; գ. 11, թթ. 1–2ըջ.; գ. 9, թթ. 6 և 2ըջ.: Ձեռագիր: Բնագիր¹³:

7 **Օհանջանյան Ավետիս Կարապետի** (1883, Երևան–1950, Թավրիզ) – խորհրդայնացումից հետո դեկավարել է «ձախ դաշնակցականներին», 1921 թ. Թավրիզում դատ է սկսել Ս. Վրացյանի դեմ՝ մեղադրելով գեղծարարությունների և ինքնազլուխ գործունեության մեջ: ՀՅԴ Գերագույն Դատական ատյանը 1921 թ. նոյեմբերի 11–ի որոշմամբ արդարացրել է Ս. Վրացյանին և 6 ամսով կախակայել Ա. Օհանջանյանին: Տե՛ս «Ասպարէզ», 2010, դեկտեմբերի 28: Թաղված է Թավրիզի Ազգային գերեզմանատանը:

8 **Եղիազարյան Սմբատ** (1886, գ. Արարատ, ՀՀ Արարատի մարզ–1962, Թեհրան) – բժիշկ, հասարակական գործիչ: Պատանի տարիքից անդամակցել է ՀՅԴ–ին: Մասնագիտությամբ բժիշկ էր:

9 Սոցիալիստ–հեղափոխականներ:

10 Նկատի ունի որպես Ջինվորական գործերի վարիչի օգնական:

11 **Սասունի Կարո** (15.07.1888, գ. Ահարոնք, Սասուն–11.08.1977, Բեյրութ) – հայ ազգային–ազատագրական պայքարի անվանի գործիչ: ՀՅԴ անդամ (1904): Եղել է Հայաստանի առաջին հանրապետության Խորհրդարանի անդամ, 1920 թ. մայիսից՝ Շիրակի նահանգապետ: Փետրվարյան ապստամբության կազմակերպման գործում ունեցել է կարևոր դերակատարություն: Հեղինակ է բազմաթիվ արժեքավոր հուշերի և աշխատությունների: Տե՛ս հատկապես Փետրուարեան ապստամբությունը (1921), Պէյրութ, «Համազգային», 1970, 263 էջ:

12 **Թարխանյան Կուռո** (1896, Շուշի, 1944, Բուխարեստ) – հայ ազգային–ազատագրական պայքարի անվանի գործիչ: ՀՅԴ անդամ: Ավարտել է Մոսկվայի Ալեքսանդրովյան զինվորական վարժարանը: Առաջին համաշխարհային պատերազմին որպես սպա մասնակցել է Արևմտյան և Հարավ–արևմտյան, ապա՝ Կովկասյան ռազմաճակատների կռիվներին: Բաշ–Ապարանի ճակատամարտի, հայ–վրացական պատերազմի և Լեռնահայաստանի հերոսամարտի մասնակից:

13 Բոլոր նիստերի արձանագրությունների արխիվային հղումները տրվել են ամբողջական՝ թե՛ բնագիր–ձեռագրերի և թե՛ մեքենագիր–պատճենների հիմքերով:

1921 թ. փետրվարի 20, Երևան
Ներկայ էին՝

Ս. Վրացեան – Արտաքին գործերի և Գիւղատնտ. [տնտեսության] [գործերի] վարիչ,

Ա. Յովհաննէսեան – Զինուորական վարիչ,

Յ. Տէր-Յակովբեան – Պարենաւորման գործերի վարիչ,

Ա. Օհանջանեան – Հաղորդակցութեան,

Ռ. Քաջբերունի¹⁴ – Հ. Փ. Կ. Անդամ,

Ե. Սարգսեան –,

Հ. Տէրտէրեան – Ֆինանսների գործերի վարիչ,

Բժ. Ս. Եղիազարեան – Խնամատարութեան,

Հ. Սարգսեան – Աշխատանքի,

Թ. Խանադեան – Զինւ. [որական] գործերի վարիչի օգնական,

Ս. Տէր-Թովմասեան – Քարտուղար:

Է (ԺԳ) քաարի, թիվ 1 (49) հունվար-մայր, 2015

ՎԷՆ հաստատական համար

Լսեցին.	Որոշեցին.
1. Շտաբի Պետի ¹⁵ զեկուցումը՝ ձակատների և զինուորական կացութեան մասին:	1. Յանձնարարել Ս. Մելիք-Եօյջեանին ¹⁶ կազմել տնային կոմիտեներից առանձին մարմին հաւաքելու ազգաբնակչությանից զինուորական ամեն տեսակի իրեր և ռազմամթերք: Վերացնել զինուորական աստիճաններ: Զինուորականները դիտվում են ըստ պաշտօնի: Մինչև մեծամասնականների ¹⁷ դէմ մղւած պայքարի լիկվիդացիան կազմել զինուորական մասերին կից [մագ. [մական] Յեղ. [ախոյակական] Դատարան: Գիշերային անցադրությունը սույ միայն քաղաքի պարետի կողմից: Զինուորական փոխադրությունների (տրանսպորտ) գործը կատարելու համար յանձնարարել Զինուորական, Պարենաւորման գործերի վարիչներին և Շտաբի Պետին կատարել կատարող պաշտօն իրենց ունեցած փոխադրական միջոցներին:
2. Մեծամասնականների կողմից բռնագրաւած իրերի հարցը:	2. Մեծամասնականների կողմից գրաււած ամեն տեսակ կենսամթերքները պետականացնել: Պետականացրած էլեկտրա-ջրաղացները առ այժմ պահել:
3. Զինուորական պարենաւորման հարցը:	3. Լիզաօրել Պարենաւորման վարիչին բոլոր հնարաւոր միջոցներով ապահովեցնել զինուորական պարենաւորման գործը: Պահեստներում գտնւած ալիւրը և կաթը տրամադրել միայն հիւանդանոցներին:
4. Քաղաքային ինքնավարությունների վերացման հարցը:	4. Վերացնել քաղաքային ինքնավարությունները, կազմել դրա փոխարեն քաղաքապետարան հինգ հոգուց կազմւած:
5. Զինուորական իշխանութեան առաջարկը ծաղկածորի շրջանը զինուորական դրություն յայտարարելու մասին:	5. Յայտարարել Ծաղկածորի շրջանը զինուորական դրություն:
6. Հ. Փ. Կոմիտէի նախագահի առաջարկը բանտարկեալների նիւթական աջակցութեան մասին:	6. Մեծամասնականների կողմից ձեռքակալւած և սպանւած կարիքաւոր անհատներին և ընտանիքներին աջակցութիւն ցոյց տալու համար դնել Հ. Փ. Կոմիտէի նախագահի տրամադրութեան տակ 10.000.000 ռուբլի:

Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի նախագահ՝ Ս. Վրացեան [ստորագրություն] Քարտուղար՝ Ս. Տէր-Թովմասեան [ստորագրություն]¹⁶¹⁷

ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 4, թթ. 5-շրջ.; գ. 9, թթ. 8 և շրջ.: Ձեռագիր: Բնագիր:

14 Քաջբերունի Ռուբեն Նազարի (1880, Խարբերդ?) – մանկավարժ, լրագրող: Խորհրդայնացումից հետո արքայազն էր Աստրախան:

15 Շտաբի պետը Գ. Սարգիսբեկյան էր:

16 Մելիք-Յոյջեան Սեդեղ – ազգային-պետական գործիչ: ՀՅԴ անդամ: Ծնվել է Սիսիանում: Եղել է Զանգեզուրի քաղաքացիական մասի կոմիսար, ապա՝ Սյունիքի նահանգապետ: Հեղկոմի օրոք բանտարկվել է և Փետրվարյան ապստամբության շնորհիվ ազատ արձակվել: Մահացել է Թեհրանում:

17 Նկատի ունի բոլշևիկներին:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԿՕՄԻՏԷԻ
ՆԻՍՏ N. 3

1921 թ. փետրվարի 21, Երևան

Ներկայ էին՝

Ս. Վրացեան – Արտաքին գործերի եւ Գիւղատնտեսութեան գործերի վարիչ,

Ե. Սարգսեան – [ՀՓԿ] Անդամ,

Ռ. Քաջբերունի –,

Կարօ Մասունի – Ներքին գործերի նախ. [արարության] գործերի վարիչ,

ԲԺ. Եղիազարեան – Խնամատարութեան գործերի վարիչ,

Հ. Տէրտէրեան – Ֆինանսների գործերի վարիչ,

Յ. Տէր-Յակովբեան – Պարենաւորման գործերի վարիչ,

Թ. Խանաղեան – [ՀՓԿ] Անդամ,

Հ. Սարգսեան – Աշխատանքի գործերի վարիչ,

Ա. Օհանջանեան – Հաղորդակցութեան գործերի վարիչ,

Ս. Տէր-Թովմասեան – Քարտուղար:

Լսեցին.	Որոշեցին.
1. Բռնագրաւած իրերի բաշխման հարց:	1. Կազմել առանձին մարմին պարենաւորման վարիչի պատասխանատւութեամբ, որ պարտականութիւն պիտի ունենայ. Ա) Յայտնագործել մեծամասնականների կողմից բռնագրաւած իրերը, Բ) Վերադարձնել տէրերին ի բաց առեալ պետական վալիտային իրերից (ոսկեղէն, գորգ) եւ պետական հիմնարկութիւնների համար անհրաժեշտ կահկարասիներից, ինչպէս նաեւ ամեն տեսակի կենսամթերքներից մնացած իրեր:
2. Քաղաքում և երկրում հանրային կարգն ու պաշտպանութիւնը ապահովեցնելու հարցը:	2. Քաղաքում հանրային կարգի և պաշտպանութեան ամբողջ գործը յանձնել Ներքին գործերի վարիչին: Ներքին գործերի նախարարութեան կից ստեղծել արտակարգ մարմին դատական և քաղաքական ֆունկցիաներով կովելու հակապետական շարժումների, պաշտօնեաների գեղծարարութեան, անգործութեան եւ սպեկուլյացիայի դէմ: Մարմինը բաղկացած է լինելու 3 և 2 փոխանդամներից:
3. Զինուորական կարիքների համար 150 միլիոն ռուբլի աւանս բաց թողնելու հարցը:	3. Բանալ Զինուորական վարիչի անունով 150 միլիոն ռուբլու աւանս:
4. Մեծամասնական իշխանութեան մնացած վարկերի հարցը:	4. Մեծամասնական իշխանութեան բոլոր վարկերը փակել:
5. Նախարարութիւններին աւանս բաց թողնելու հարցը:	5. Մինչև նախարարութիւնների նախահաշիւները պատրաստելը յանձնարարել նախարարութիւնների վարիչներին մէկ շաբաթուայ ընթացքում ներկայացնել ֆինանսական նախարարութեան իրենց անհրաժեշտ ծախսի պահանջը:
6. Մեծամասնական գօրանասերից մեր կողմն անցնող գինուորականների ներում շնորհելու հարցը:	6. Հայաստանի դէմ կուռղ մեծամասնական դրօշակի տակ գտնուող և ամեն ազգի պատկանող գինուորականները եթէ հրաժարուն կուել մեր դէմ, տալ նրանց ընդհանուր ներումն եւ երաշխաւորել նրանց կեանքի անձեռնմխելիութիւնը:

Հայրենիքի Փրկութեան Կօմիտէի նախագահ՝ Ս. Վրացեան [ստորագրություն]
Քարտուղար՝ Ս. Տէր-Թովմասեան [ստորագրություն]

ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 4, թթ.1-2րդ.; գ. 11, թթ. 3-2րդ.; գ. 9, թթ. 11-12: Ձեռագիր: Բնագիր:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԿՕՄԻՏԷԻ
ՆԻՍՏ N. 4

ԱՐԻԻՎ

1921 թ. փետրվարի 22, Երևան
Ներկայ էին՝
Ս. Վրացեան,
Ա. Յովհաննէսեան,
Թ. Խանադեան,
Կ. Սասունի,
Ա. Օհանջանեան,
Հ. Տէրտէրեան,
Յ. Տէր-Յակովբեան,
ԲԺ. Ս. Եղիազարեան,
Հ. Սարգսեան,
Ե. Սարգսեան,
Ռ. Քաջբերունի,
Ս. Տէր-Թովմասեան:

Լսեցին.	Որոշեցին.
1. Ֆինանսների գործերի վարիչի օրինագիծը հայկական նոր փողեր շրջանառության դնելու մասին:	1. Հաստատել խմբագրական փոփոխություններով:
2. Օրինագիծ բնակարանների բռնագրաման մասին:	2. Ընդունել մասնաւոր փոփոխություններով:
3. Հաղորդակցության վարիչի օրինագիծը փոստ-հեռագրական վարչության անունով 40.000.000 թուրլու վարկ բանալու մասին:	3. Հաստատել:
4. Հաղորդակցության վարիչի օրինագիծը նոյն նախարարության անունով 20 միլիոն թուրլու վարկ բանալու մասին:	4. Հաստատել:
5. Սովետական փողերի գործածության հարց:	5. Հայաստանի տերիտորիայում սովետական ամեն տեսակի փողերի գործածությունը վերացնել:
6. Պետական շէնքերում մասնաւոր բնտանիքների բնակությունը արգելելու մասին:	6. Բացի այն պաշտօնեաներից, որոնց բնակությունը նոյն հիմնարկի մէջ պաշտօնի բերումով անհրաժեշտ է գտնուում, արգելել մասնաւոր բնտանիքների բնակությունը պետական հիմնարկություններում:
7. Ռադիո-կայանները Հաղորդակցության նախարարության յանձնելու մասին:	7. Հ. [այաստանի] տերիտորիայում գտնուող բոլոր ռադիո-կայանները, բացի դաշտայիններից, յանձնել հաղորդակցության նախարարությանը:
8. Հայկօսպի վարչության դիմումը վերակազմելու մեծամասնական իշխանության կողմից վերացած հայկոպի վարչությունը:	8. Առ այժմ յետաձգել:

Է (ԺԳ) քաղի, թիվ 1 (49) հունվար-մարտ, 2015
Վէ՛մ հասանալկական հասընէս

Հայրենիքի Փրկության Կօմիտէի նախագահ՝ Ս. Վրացեան [ստորագրություն]
Քարտուղար՝ Ս. Տէր-Թովմասեան [ստորագրություն]

ՀԱԱ, Ֆ. 37, ց. 1, գ. 4, թթ. 2-շրջ.; գ. 9, թթ. 13 և շրջ.: Ձեռագիր: Բնագիր:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԿՕՄԻՏԷԻ
ՆԻՍՏ N. 5

1921 թ. փետրվարի 23, Երևան
Ներկայ էին՝

Ս. Վրացեան – Նախագահ Հ. Փ. Կ., Արտաք.[ին] եւ Գիւղ.[ատնտեսության]
[գործերի] վարիչ,

Հ. Տէրտէրեան – Ֆինանսների գործերի վարիչ,

Յ. Տէր-Յակովբեան – Պարենաւորման,

Բժ. Ս. Եղիազարեան – Խնամատարութեան,

Ա. Օհանջանեան – Հաղորդակցութեան,

Թ. Խանաղեան –¹⁸,

Հ. Սարգսեան – Աշխատանքի եւ Ազիտ.[ացիայի],

Ե. Սարգսեան – [ՀՓԿ] Անդամ,

Ռ. Քաջբերունի –,

Յով. Բուդաղեան¹⁹ –,

Ս. Մելիք-Եօլջեան – Ներքին գործոց վարիչի օգնական,

Ս. Տէր-Թովմասեան – Քարտուղար:²⁰

Լսեցին.	Որոշեցին.
1. Ընթացիկ խնդիրներ Հ. Փ. Կ. ընդ- հանուր ժողովներում չքննելու հարցը:	1. Ընթացիկ խնդիրները լուծում է Հ. Փ. Կ. նախա- գահութիւնը համապատասխան վարիչի հետ:
2. Բռնագրաւած գոյքերի կենտ- րոնացման հարցը:	2. Բռնագրաւած իրերը յայտնաբերելու և դասաւորելու յանձնաժողովը անջատել Պարենաւորման նախարարութիւնից, միացնել Ն.[երքին] Գ.[ործերի] նախարարութեան:
3. Բռնագրաւած բնակարանների մի մասը կառավարութեան տրամա- դրութեան տակ պահելու հարցը:	3. Օտար միսսիաների և պետական այլ կա- րիքների համար պահել կառավարութեան տրամադրութեան տակ մի քանի կարևոր շէնքեր: Լիազօրել Հ. Փ. Կ. նախագահին քաղաքապետարանի հետ որոշել այդ շէնքերը:
4. Մեծամասնականների իշխանու- թեան շրջանում պետական ծառա- յողներին չը տրուածը վճարելու հարցը:	4. Փետրվար ամսւայ համար առաջնորդւել յունւար ամսւայ հաշուով:
5. Մեծամասնականների իշխանութեան շրջանում պետական ծառայողներին խոստացւած տօնական նւերներ տալու հարցը:	5. Տալ տօնական նւերներ համաձայն նախապէս եղած որոշման:
6. Զինւորներին միանւագ նպաստ տալու հարցը:	6. Տալ Հայաստանի զինւորներին (բանակում գտնւող) 5.000-ական ռուբլի միանւագ նպաստ:
7. Առողջապահական կոմիսարիատը Խնամատարութեան նախարարութեան միացնելու հարցը:	7. Ընդունել:
8. Գլխ.[ավոր] համբարակային ²⁰ վար- չութեան կոմիսար նշանակելու հարցը:	8. Ընկ. Արմենակ Մաքսապետեանին նշանակել Համբարակային գլխաւոր վարչութեան կոմիսար:

18 Բնագրում այսպէս է, հավանաբար պետք է լինի կամ ՀՓԿ անդամ, կամ էլ՝ վարիչի օգնական:

19 Բուդաղեան Հովակիմ Հարությունի (1870, Կաղզվան–1923, Փարիզ) – իրավաբան, խմբագիր:

20 Թիկունքի՝ սննդի և նյութական ապահովման:

9. Արտակարգ Ցանձնաժողովի կազմի հաստատման հարցը:	9. Հաստատել Արտակարգ Ցանձնաժողովի նախագահի համար-Ա. Օհանջանեան, անդամներ՝ Վահէ Արծրունի եւ Միրզախանեան, փոխանդամ՝ Խոսրով Թիւթիւնջեան:
10. Պետական գանազան հիմնարկություններում այլ և ազատ սպաների ընդհատրացիայի ²¹ ենթարկելու հարցը:	10. Ոչ մէկ սպայ չի կարող ազատել զինուորական ընդհատրացիայից: Զինուորական ծառայությունից ազատում են զինուորական իշխանություն համաձայնութեամբ միայն տելինիքական կրթություն ունեցող սպաները, որոնց պաշտօնաւարած հիմնարկությունները յայտարարած են զինուորական դրության մէջ:
11. Ռադիո-հաղորդագրություններից օգտուելու հարցը:	11. Ռադիո-հաղորդագրությունները նախ քան հրատարակելը ներկայացում են Հ. Փ. Կ. նախագահին, որի կարգադրութեամբ կարող են ստանալ պետական այլ հիմնարկությունները:

Հայրենիքի Փրկութեան Կօմիտէի նախագահ՝ Ս. Վրացեան [ստորագրություն] Քարտուղար՝ Ս. Տէր-Թովմասեան [ստորագրություն]²¹

ՀԱԱ, Ֆ. 37, ց. 1, գ. 4, թթ. 15-2րջ.; գ. 9, թթ. 14-15: Ձեռագիր: Բնագիր:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԿՕՄԻՏԷԻ

ՆԻՍ N. 6

1921 թ. փետրուարի 24, Երևան

Ներկայ էին՝

Ս. Վրացեան-Նախագահ Հ. Փ. Կ., Արտաք.[ին] գործ.[երի] եւ Գիւղ.[ատնտե-սության] նախ.[արարութեան] [գործերի] վարիչ,

Ա. Յովհաննէսեան - Զինուորական գործերի վարիչ,

Թ. Խանաղեան -²²,

Կ. Սասունի - Ներքին գործերի նախ.[արարութեան] վարիչ,

Հ. Տէրտէրեան - Ֆինանսների գործերի վարիչ,

Ա. Օհանջանեան - Հաղորդակցութեան [գործերի] վարիչ,

Յ. Տէր-Յակովբեան - Պարենաւորման [գործերի] վարիչ,

ԲԺ. Ս. Եղիազարեան - Խնամատարութեան գործերի վարիչ,

Հ. Սարգսեան - Աշխատանքի եւ ագիտացիայի [գործերի] վարիչ,

Ե. Սարգսեան - Հ. Փ. Կ. Անդամ,

Յով. Բուդաղեան -,

Ռ. Քաջբերունի -,

Ս. Տէր-Թովմասեան - Քարտուղար:

²¹ Ռուսերեն՝ գրանցում, հաշվառում:

²² Բնագրում այսպես է, հավանաբար պետք է լինի կամ ՀՓԿ անդամ, կամ էլ՝ վարիչի օգնական:

Լսեցին.	Որոշեցին.
1.Կառավարության ընթացիկ ծախսերը հոգալու համար նախարարություններին 1.420 միլիոն ռուբլի (չէկեթով) վարկ բաց անելու հարցը:	1.Կառավարության ընթացիկ ծախսերը հոգալու համար բանալ վարկեր. Փրկության Կոմիտեին – 100 միլիոն, Ֆինանսների նախարարության – 30 Հաղորդակցության – 100 Գիտատնտեսության – 50 Արդարադատության – 10 Ներքին գործերի – 200 Արտ.[աքին] գործերի – 10 Զինուորական նախարարության – 500 Սոցիալ.[ական] ²³ ապահով.[ության] –100 Լուսաւորության 50 Աշխատանքի նախ.[արարութե]–եան – 10 Պարենաւորման նախ.[արարութե]–եան – 200 Ժողովրդական տնտեսութեան ²⁴ – 50 Պետական կօստրօլ ²⁵ – 10 միլ.[իոն]
2. Մեծամասնական իշխանութեան կոմիսարիատներում գտնւած գումարները գանձարան գանձելու հարցը:	2. Մեծամասնական իշխանութեան կոմիսարիատներում գտնւած գումարները մտցնել Պետական գանձարան:
3. Հաշմանդամներին միանւագ նպաստ տալու հարցը:	3. Տալ հաշմանդամներին ևս զինուորների նման 5.000 ռուբլի միանւագ նպաստ:
4. «Ազատ Հայաստան»-ի ²⁶ խմբագրական կազմի հարցը:	4. Հաստատել «Ազատ Հայաստան»-ի խմբագրական կազմի համար հետևեալ ընկերները Հ. Փ. Կ. կողմից՝ Ռ. Քաջբերունի, Մեր. Օզանեան ²⁷ , Գ. Գավազեան:

Հայրենիքի Փրկութեան Կոմիտեի նախագահ՝ Ս. Վրացեան [ստորագրություն]
Քարտուղար՝ Ս. Տէր-Թովմասեան [ստորագրություն]²³²⁴²⁵²⁶²⁷

ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 4, թթ. 7-շրջ.; գ. 9, թթ. 16 և շրջ.: Ձեռագիր: Բնագիր:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԿՕՄԻՏԷԻ
ՆԻՍՏ N. 7

1921 թ. մարտի 2, Երևան
Ներկայ էին՝
Ս. Վրացեան – Նախագահ Հ. Փ. Կ., Արտ.[աքին] Գործ.[երի] եւ Գիւղ.[ատնտեսության] [գործերի] վարիչ,
Ա. Յովհաննէսեան – Զինուորական գործերի վարիչ,
Կ. Սասունի – Ներքին,
Ա. Խոնդկարեան – [ՀՓԿ] Անդամ,
Վ. Մինախորեան²⁸ – Պարենաւորման գործերի վարիչ,

23 Խնամատարության:

24 Ժողովրդական տնտեսության խորհրդին:

25 Ռուսերեն՝ վերահսկում:

26 «Ազատ Հայաստան», օրաթերթ: Գրական, ազգային և քաղաքական: Օրգան Հայաստանի Հանրապետության կառավարության: Երևան, տպ. «Հառաջ», 1921, 2 էջ, (55x45) սմ: Խմբագիր՝ Ա. Չիլինգարյան, Մ. Օզանյան: Տպագրվել է 36 համար:

27 **Օզանյան Մերուժան** (1885, Շապին-Գարահիսար-16.11.1965) – մանկավարժ, խմբագիր: ՀՅԴ անդամ: 1916-1919 թթ.՝ «Հայրենիք» թերթի խմբագիր, ընտրվել է ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովի պատգամավոր, ՀՅԴ Գերագույն Դատական ատյանի անդամ: ԱՄՆ-ում երկար տարիներ խմբագրել է «Հայրենիք» և «Ասպարեզ» թերթերը, վարել ղեկավար կուսակցական պաշտոններ:

28 **Մինախորյան Վահան** (1884, Գանձակ – 1944, Բելգրադ)– ազգային-հասարակական գործիչ, հրապարակախոս: Հարել է սոցիալիստ-հեղափոխականների կուսակցությանը, սերտորեն համագործակցել ՀՅԴ-ի հետ: Եղել է Հայաստանի առաջին հանրապետության Խորհրդարանի անդամ: Հեղինակ է «1915 թվական: Արհավիրքի օրեր» հուշագրության:

Ռ. Քաջբերունի – [ՀՓԿ] Անդամ,
 Ա. Օհանջանեան – Հաղորդակցութեան
 Յով. Բուդաղեան – [ՀՓԿ] Անդամ,
 Հ. Տէրտէրեան – Ֆինանսների
 Ս. Տէր-Թովմասեան – Քարտուղար:

Լսեցին.	Որոշեցին.
1. Բանտարկեալների կացութիւնը բարելավելու հարցը:	1. Խնդրի լուծումը յանձնարարել Ն.Երքին] Գ.Խործերի] վարիչին և Արտակարգ Յանձնաժողովի նախագահին, առաջարկելով անմիջապէս բարելաւել:
2. Ձերբակալութիւնների ձևի հարցը:	2. Առաջարկել Արտակարգ Յանձնաժողովին, որ նա շուտով ստանձնի իր պարտականութիւնները: Ձերբակալութիւնների և խուզարկութիւնների իրաւունքը վերապահուում է միմիայն Արտակարգ Յանձնաժողովին:
3. Համբարակային վարչութեան հարցը:	3. Զինուորական մասերի պարենաւորումը կանոնաւորելու և չարաշահումների դէմ կռուելու համար նշանակել գլխաւոր համբարակային վարչութեան կից 3 հոգուց բաղկացած վերահսկիչ յանձնախումբ: Նշանակել ամեն մէկ զօրամասում առանձին տնտեսական վերահսկիչ:
4. Կեանքի թանկութեան հարցը:	4. Յանձնարարել Ներքին գործոց և Պարենաւորման նախարարութիւններին բերել այս մասին մշակած ծրագիր:
5. Պետական հիմնարկութիւններում աշխատանքներ սկսելու մասին:	5. Խնդրել Հայրենիքի Փրկութեան Կօմիտէի նախագահին հրահանգել բոլոր վարիչներին իրենց աշխատանքների կանոնաւորման մասին:

Հայրենիքի Փրկութեան Կօմիտէի նախագահ՝ Ս. Վրացեան [ստորագրություն]
 Քարտուղար՝ Ս. Տէր-Թովմասեան [ստորագրություն]

ՀԱԱ, Ֆ. 37, ց. 1, գ. 4, թթ. 20–2րջ.; գ. 9, թթ. 19 և 2րջ.: Ձեռագիր: Բնագիր:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԿՕՄԻՏԷԻ
 ՆԻՍ N. 8

1921 թ. մարտի 3, Երևան
 Ներկայ էին՝
 Ս. Վրացեան – Հ. Փ. Կ. Նախագահ, Արտ.[աքին] [գործերի] և Գիւղ.[ատնտեսութեան] [գործերի] վարիչ,
 Կ. Սասունի – Ներքին գործոց նախարարութեան վարիչ,
 Ա. Յովհաննէսեան – Զինուորական
 Ա. Խոնդկարեան – [ՀՓԿ] Անդամ,
 Վ. Մինախոյրեան – Պարենաւորման
 Բժ. Ս. Եղիազարեան – Խնամատարութեան
 Ա. Օհանջանեան – Հաղորդակցութեան
 Ռ. Քաջբերունի – [ՀՓԿ] Անդամ,
 Հ. Տէրտէրեան – Ֆին.[անսների] նախ.[արարության] վարիչ,
 Յ. Բուդաղեան – [ՀՓԿ] Անդամ,
 Ս. Տէր-Թովմասեան – Քարտուղար:

Լսեցին.	Որոշեցին.
1. Պարենաւորման հարց:	1. Հացի գնման համար բանալ Պարենաւորման նախարարութեան անունով (500.000.000) հինգ հարիւր միլիոն ռուբլու վարկ: Գնման գործը կազմակերպել գաւառներում շրջանային Փրկ.[ույթայն] Կօմիտէների, իսկ քաղաքում քաղաքապետարանի միջոցաւ: Գնահատութիւնը հացի արժէքի յանձնարարել Հ. Փ. Կօմիտէի նախագահութեան՝ ստանալով որոշ հրահանգներ Պարենաւորման նախարարութիւնից:
2. «Սագօ» առեւտրական ընկերութեան հարցը:	2. Յանձնարարել Պարենաւորման վարիչին գալ համաձայնութեան «Սագօ» ընկերութեան հետ ապրանքների գնման առթիւ:
3. Ջրաղացների և դինկերի ²⁹ պետականացման հարցը:	3. Խնդրի հիմնական լուծումը վերապահել կազմելիք կառավարութեան: Յանձնարարել Պարենաւորման նախարարութեան վարիչին ստուգելու ստեղծուած դրութիւնը, տալ բաւարարութիւն ջրաղացատէրերին:
4. Դեղատոների պետականացման հարցը:	4. Յետաձգել: Յանձնարարել Խնամատարութեան նախարարութեան բաց անել փակուած դեղատները:
5. Օրինագիծ Հ. Փ. Կօմիտէի անունով 100.000.000 ռուբլի վարկ բաց անելու մասին:	5. Հաստատել:
6. Գերած և արքորած գինտրականների ընտանիքների ապահովութեան հարցը:	6. Յանձնարարել Զինտրական նախարարութեան ներկայացնել մշակուած ծրագիր:
7. Օրինագիծ որբանոցային կարիքների 50.000.000 ռուբլու վարկ բանալու մասին:	7. Հաստատել:
8. Տաճկաց ներկայացուցչի դիմումը Սուլէյման-Նուրիին տաճիկ հրամանատարութեան յանձնելու մասին:	8. Բաւարարել:

Հայրենիքի Փրկութեան Կօմիտէի նախագահ՝ Ս. Վրացեան [ստորագրություն]
Քարտուղար՝ Ս. Տէր-Թովմասեան [ստորագրություն]²⁹

ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 4, թթ. 23–2ըջ.; գ. 9, թթ. 20 և 2ըջ.: Ձեռագիր: Բնագիր:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԿՕՄԻՏԷԻ
ՆԻՍ Ս. 9

1921 թ. մարտի 4, Երևան

Ներկայ էին՝

Ս. Վրացեան – Հ. Փ. Կ. Նախագահ և Արտաքին և Գիւղատնտեսութեան նախ.
[արարությունների] [գործերի] վարիչ,

Կ. Սասունի – Ներքին գործոց նախ.[արարության] վարիչ,

Ա. Յովհաննէսեան – Զինտրական գործերի վարիչ,

Հ. Տէրտէրեան – Ֆինանսական գործերի վարիչ,

Ա. Օհանջանեան – Հաղորդակցութեան,

²⁹ Դիւն – սրանով հացահատիկների վրայի մաշկը հանում են, թեփահան են անում, որ զանազան ձևեր է ունենում՝ նայելով հանգամանքներին: Տես **Մալխասեանց Ստ.**, Հայերէն բացատրական բառարան, հատ. 1, Եր., 1944, էջ 520:

- ԲԺ. Ս. Եղիազարեան – Խնամատարութեան
- Վ. Մինախորեան – Պարենաւորման
- Ա. Խոնդկարեան – [ՀՓԿ] Անդամ,
- Յ. Բուդաղեան – Անդամ,
- Ռ. Քաջբերունի –
- Ս. Տէր-Թովմասեան – Քարտուղար:

Լսեցին.	Որոշեցին.
1. Զինուորական մասերում տնտեսական վերահսկողութեան կանոնների քննությունը:	1. Հաստատել մասնաւոր փոփոխություններով:
2. Պարենաւորման [նախարարության] վարիչի հրահանգները ջրաղացների և դինկերի շահագործման մասին:	2. Հաստատել փոփոխություններով:
3. Հրահանգներ շուկայի գների կրճատման մասին:	3. Որովհետև չարաշահութեան դէմ կուելը մտնում է Արտակարգ Յանձնաժողովի պարտականությունների մէջ, յանձնարարել Արտակարգ Յանձնաժողովի նախագահին հետևելու շուկայի գների չարաշահ բարձրացման վրայ, հրատարակելով այս առթիւ հրահանգներ և պարտադիր որոշումներ:

Հայրենիքի Փրկութեան Կօմիտէի նախագահ՝ Ս. Վրացեան [ստորագրություն] Քարտուղար՝ Ս. Տէր-Թովմասեան [ստորագրություն]

ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 4, թ. 24; գ. 9, թթ. 22 և շրջ.: Ձեռագիր: Բնագիր:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԿՕՄԻՏԷԻ
ՆԻՍՏ N. 10

1921 թ. մարտի 5, Երևան
Ներկայ էին՝

- Ս. Վրացեան – Հ. Փ. Կ. նախագահ, Արտ.[աքին] և Գիւղ.[ատնտեսության] [գործերի] վարիչ,
- Ա. Յովհաննէսեան – Զինւ.[որական] գործ.[երի] վարիչ,
- Կ. Սասունի – Ներք.[ին]
- Ա. Օհանջանեան – Հաղորդակցութեան
- Վ. Մինախորեան – Պարենաւորման
- ԲԺ. Ս. Եղիազարեան – Խնամատարութեան
- Յ. Բուդաղեան – [ՀՓԿ] Անդամ,
- Յ. Տէր-Յակովբեան –
- Ա. Խոնդկարեան –
- Ս. Տէր-Թովմասեան – Քարտուղար:

Լսեցին.	Որոշեցին.
1. Ինֆորմացիոն և տպագրական գործի վարչութեան 35.000.000 թուրքի վարկ բաց անելու մասին:	1. Հաստատել:
2. Արդարադատութեան վարիչի դիմումը Լ. Սարգսեանի գործի քննութեան համար առանձին յանձնախումբ նշանակելու մասին:	2. Առաջարկել Արդարադատութեան նախարարութեան քննություն կատարել սովորական ձևով:

3. Արդարադատության նախարարության որոշ մասերի լիկվիդացիայի համար լրացուցիչ 20.000.000 ռուբլու վարկ բաց անելու մասին:	3. Լիկվիդացիայի խնդիրը յետաձգել, ժողովրդական դատաւորների և քննիչների համար ներկայացնել նախահաշիվ:
4. Բանտերը ժամանակաորապէս Ներք.[ին] գործ.[երի] նախարարության յանձնելու մասին:	4. Բանտերը և բանտային վարչութիւնները ժամանակաորապէս յանձնել Ներք.[ին] գործ.[երի] նախարարութեանը:
5. Էլեկտրակայանները Հաղորդակցութեան նախարարութեանը յանձնելու մասին:	5. Էլեկտրակայանները ժամանակաորապէս յանձնուում են Հաղորդակցութեան նախարարութեանը:
6. Գաւառներում տեղական պաշտօնեաներ նշանակելու հարցը:	6. Առաջարկել բոլոր վարչութիւններին գաւառներում պաշտօնեաներ նշանակելիս անպայման նկատի ունենալ տեղական Հ. Փ. Կ. կարծիքները: Չնշանակել հին եւ վարկաբեկած պաշտօնեաներին:
7. Հիւանդ բանտարկեալների առանձնացնելու հարցը:	7. Յանձնարարել Խնամատարութեան նախարարութեան կազմել առանձին բժշկական յանձնախումբ՝ ստուգելու հիւանդ բանտարկեալներին եւ Ն.[երքին] Գ.[ործերի] նախարարութեան հրահանգով առանձնացնել:
8. Ռադիո-կայանները Հաղորդակցութեան նախարարութեանը յանձնելու որոշման վերամշակման հարցը:	8. Ռազմական նախարարութեան տրամադրութեան տակ գտնուած բոլոր ռադիո-կայանները յանձնել հաղորդակցութեան նախարարութեանը: Բեռնակիր ռադիո-կայաններ զանազան վայրեր ուղարկելը վերապահուում է Ռազմական նախարարութեանը:

Հայրենիքի Փրկութեան Կօմիտէի նախագահ՝ Ս. Վրացեան [ստորագրություն]
Քարտուղար՝ Ս. Տէր-Թովմասեան [ստորագրություն]

ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 4, թթ. 3-շրջ.; գ. 9, թթ. 23 և շրջ.: Ձեռագիր: Բնագիր:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԿՕՄԻՏԷԻ
ՆԻՍՏ N. 11

1921 թ. մարտի 7, Երևան

Ներկայ էին՝

Ս. Վրացեան – Նախագահ Հ. Փ. Կ., Արտ.[աքին] եւ Գիւղ.[ատնտեսության]
[գործերի] նախարարությունների վարիչ,

Ա. Յովհաննէսեան – Զինւ.[որական] գործ.[երի] վարիչ,

Կ. Սասունի – Ներք.[ին] գործ.[երի] վարիչ,

Հ. Տէրտէրեան – Ֆինանսների,

Բժ. Ս. Եղիազարեան – Խնամատարութեան,

Վ. Մինախորեան – Պարենաւորման,

Հ. Սարգսեան – Աշխ. եւ Ագիտ.[ացիայի],

Յ. Բուդաղեան – Անդամ Հ. Փ. Կ.,

Ա. Խոնդկարեան –,

Թ. Խանաղեան –,

Գ. Սարգիսբէգեան – Շտաբի պետ,

Ս. Տէր-Թովմասեան – Քարտուղար:

Լսեցին.	Որոշեցին.
1. Օրինագիծ Գիւղատնտեսութեան և Պետ.[] գոյք.երի] նախարարութեան մարտ ամսւայ ծախսերի նախահաշիւը 271.820.235 ռուբլու հաստատելու մասին:	1. Բանալ Գիւղ.[ատնտեսության] և Պետ.[ական] գոյք.երի] նախ.[արարության] 1921 թ. մարտ ամսւայ ծախսերի համար 271.820.235 ռուբ.[ի] լրացուցիչ վարկ:
2. Առաջարկ լեռնային բաժանմունքը անջատել ժող.[ովրդական] տնտես.[ության] խորհրդից և միացնել Գիւղ.[ատնտեսության] և Պետ.[ական] գոյք.երի] նախարարութեան:	2. Հաստատել:
3. Ռազմական գործերի վարիչի առաջարկը չնախատեսնւած ծախսերի համար 10 միլ.[իոն] ռուբլի վարկ բանալու մասին:	3. Բանալ Ռազմական վարիչի անունով չնախատեսնւած ծախսերի համար 10 միլ.[իոն] ռուբլի վարկ:
4. Հայկօօպը Պարենաւորման նախարարութիւնից անջատելու հարցը:	4. Խնդրի հիմնական լուծումը յետաձգել: Յանձնարարել Պարենաւորման վարիչին նշանակել վարչութիւն:
5. Պետական բանկում և ուրիշ հաստատութիւններում գտնուող մասնաւոր անձանց վալիտան և ոսկի դրամները պետականացնելու հարցը:	5. Մասնաւոր անձանց պատկանող բոլոր արտասահմանեան վալիտան և ոսկե դրամները, որոնք գտնուում են բանկային հաստատութիւնների և պետական հիմնարկութիւնների մէջ, համարել պետական սեփականութիւն եւ կենտրոնացնել պետական բանկում, տալով տէրերին նոցա արժէքը տեղական դրամներով Ֆինանսների նախարարութեան կողմից որոշուած կուրսով:
6. Ֆինանսների վարիչի առաջարկը գոյութիւն ունեցող վարկերի վերացման մասին:	6. 1) Վերացնել առ 1-ն յունւարի 1921 թ. չգանձուած հարկերի և տուրքերի մնացորդները, բացի արհեստակցային (промысловый) հարկից և ակցիզային տուրքից: 2) Վերացնել առ 1-ն մարտի 1921 թ. բոլոր հարկերի և տուրքերի տոկոսիքը և տուգանքները, ինչպէս և այն մանր վճարումների մնացորդները, որոնք բարոք կը համարի Ֆինանսների նախարարութիւնը: 3) Յանձնարարել Ֆինանսների նախարարութեանը մշակել հարկային նոր սխտեմ:
7. Մեծամասնական իշխանութեան կողմից ստեղծուած բաժանմունքները լիկվիդացիայի ենթարկելու մասին:	7. Առաջարկել նախարարութիւնների վարիչներին 3 օրւայ ընթացքում ներկայացնել ծրագիր այն բաժանմունքների մասին, որոնց վերացումը համարոււմ է անհրաժեշտ:
8. Վերջին քաղաքացիական կռիւներում սպանուածների ընտանիքներին նպաստ տալու հարցը:	8. Կազմել մի յանձնախումբ քաղաքացիական կռիւ գոհերի թիւը պարզելու, նրանց անմիջական նպաստ հասցնելու եւ ծրագիր կազմելու ընտանիքներին նպաստ տալու համար: Նշանակել յանձնախմբի նախագահի համար Յ. Քաջազնունուն, անդամներ Լ. Շանթին եւ գնդ. Մելիքեանին: Բանալ Հ. Փ. Կ. անունով անմիջական նպաստ տալու համար 50 միլ.[իոն] ռուբլու վարկ:
9. Անտոն Մարակուտի ³⁰ դիմումը իրենից վերցրուած դրամները իրերն տալու մասին:	9. Պարզել Արդարադատութեան նախարարութեան միջոցաւ, եթէ նա օրինական կերպով ազատուած է բանտից, Խնամատարութեան նախարարութեան միջոցներից տալ նպաստ Հայաստանից հեռանալու:
10. Բժ. Յովհաննիսեանի հիւանդանոցի խնդիրը:	10. Վերադարձնել հիւանդանոցը բժ. Յովհաննիսեանին, առաջարկել Հ. Փ. Կ. տրամադրութեան տակ դնել 5 մահճակալ:

ԱՐԽԻՎ

Է (ԺԳ) քաղի, թիւ 1 (49) հունվար-մարտ, 2015

ՎԷՆ համահայկական հանդես

30 Անտոն Մարակուտին ավստրիական բանակի սպա էր, ով կասկածվում էր լրտեսության մեջ:

11. Բժշկա-սանիտարական վարչութեան վարկերի հարցը:	11. Բժշկա-սանիտարական վարչ.[ութեան] կարիքները բաւարարել Խնամատարութեան նախարարութեան վարկերից:
12. Մեծամասնականների կողմից գրաւած և բանտարկեալներից վերցրւած դրամների վերադարձման հարցը:	12. Մեծամասնականների կողմից գրաւած և բանտարկեալներից վերցրւած բոլոր տեսակի դրամները համարել գանձարանի սեփականութիւն:
13. Պետական ծառայողների ռոճիկների հարցը:	13. Յանձնարարել Աշխ.[ատանքի] նախարարութեան մէկ շաբաթայ ընթացքում ներկայացնել ռոճիկների նոր ծրագիր:
14. Վերջին շարժումների պատմական տեղեկութիւններ հաւաքելու հարցը:	14. Կազմել այդ նպատակի համար առանձին յանձնախումբ: Երկու օրւայ ընթացքում ներկայացնել թեկնածուների ցուցակը:

Հայրենիքի Փրկութեան Կօմիտէի նախագահ՝ Ս. Վրացեան [ստորագրություն]
Քարտուղար՝ Ս. Տէր-Թովմասեան [ստորագրություն]

ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 4, թթ. 21-2րջ., 22; գ. 9, թթ. 28-29րջ.; գ. 10, թթ. 21-22:
Ձեռագիր: Բնագիր:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԿՕՄԻՏԷԻ
ՆԻՍ ՈՒՆ 12

1921 թ. մարտի 8, Երևան
Ներկայ էին՝
Ս. Վրացեան - Նախագահ Հ. Փ. Կ., Արտաքին եւ Գիւղատնտեսութեան նախ.
[արարությունների] [գործերի] վարիչ,
Ա. Յովհաննէսեան - Ռազմական գործերի վարիչ,
Հ. Տէրտէրեան - Ֆինանսների
Ա. Օհանջանեան - Հաղորդակցութեան
Վ. Մինախորեան - Պարենաւորման
Բժ. Ս. Եղիազարեան - Խնամատարութեան
Թ. Խանաղեան - Անդամ Հ. Փ. Կ.,
Յ. Բուդաղեան -
Ա. Խոնդկարեան -
Հ. Սարգսեան - Աշխատանքի նախ.[արարության] վարիչ,
Ս. Տէր-Թովմասեան - Քարտուղար.³⁰³¹

Լսեցին.	Որոշեցին.
1. Պաշտօնեաներին գինի բաց թողնելու համար:	1. Բաց թողնել «Արարատ» գործարանից պետական պաշտօնեաներին բաշխելու համար 10.000 շիշ գինի:
2. Էջմիածնի գինւորական կոմիսսարիատը վերացնելու խնդիր:	2. Վերացնել:
3. Կուլտուր-Պատմական ինստիտուտի ³¹ հարցը:	3. Պահել Կուլտուր-Պատմական ինստիտուտը, պահելով նրան ենթակա բոլոր հիմնարկութիւնները: Ն. Աղբալեանին նշանակել Հ. Փ. Կ. ներկայացուցիչ կոլեգիայում յանձնարարելով շարունակել սկսած աշխատանքները:

31 1921 թ. փետրվարի 2-ին ՀՍԽՀ լուսժողկոմ Ա. Հովհաննիսյանի նախագահությամբ գումարվել է Էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտի առաջին նիստը, գիտական կոլեգիայի նախագահ և վարիչ է նշանակվել սոցիալ-դեմոկրատ Լևոն Սարգսյանը, գիտական քարտուղար՝ Երվանդ Տեր-Մինասյանը, անդամներ՝ մատենադարանի վարիչ Սենեքերիմ Տեր-Հակոբյանը և թանգարանի վարիչ Լևոն Լիսիցյանը: Այս ինստիտուտը ստեղծել էին բոլշևիկները՝ Էջմիածնի գույքի և գրադարանի բռնագրավման արդյունքում:

4. Շտատների ³² կրճատման հարցը:	4. Ընտրել յանձնախումբ մշակելու համար պետական հաստատությունների եղանակը և ներկայացնելու կառավարության ի քննություն, իսկ մինչ այդ յանձնարարել վարիչներին պաշտօնեաների թիւը հասցնել ամենակարճ ժամանակում մինիմումի: Յանձնախումբի կազմի համար հրաիքել Ս. Տիգրանեանին ³³ , Ա. Չիլինգարեանին ³⁴ , Ա. Խոնդկարեանին, Լ. Շանթ և Լ. Թամանեան: Նախագահ նշանակել Ս. Տիգրանեանին:
5. Պարենաւորման կօմիտէի հարցը:	5. Երևանի պարենաւորման կօմիտէն պիտի գործի Պարենաւորման նախարարութեան հետ համախորհուրդ, համապետական նշանակութիւն ունեցող խնդիրների համար նա պէտք է ստանայ հրահանգներ Պարենաւորման նախարարութիւնից: Սակագնի սխտեմը Հ. Փ. Կ. համարում է աննպատակ ներկայ տնտեսական ճգնաժամի նկատմամբ:
6. Քաղաքապետարանի սեփական տնտեսութեան հարցը:	6. Վերականգնում են Քաղաքապետարանի տնտեսական և քաղաքական ֆունկցիաները, որոնք գործելու են Պարենաւորման նախարարութեան հետ համախորհուրդ, իսկ համապետական նշանակութիւն ունեցող խնդիրների համար պէտք է ստանալ Պարենաւորման նախարարութիւնից հրահանգներ:
7. Թուրքերեն լեզուվ թերթ հրատարակելու հարցը:	7. Հրատարակել «Ազատ Հայաստան» թուրքերեն լեզուվ թերթ ³⁵ մտցնելով խմբագրութեան մէջ նաև թուրք մտաւորականներ:

Հայրենիքի Փրկութեան Կօմիտէի նախագահ՝ Ս. Վրացեան [ստորագրություն]
Քարտուղար՝ Ս. Տէր-Թովմասեան [ստորագրություն]³²³³³⁴³⁵

ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 4, թթ. 33-2րջ.; գ. 9, թթ. 32-33: Ձեռագիր: Բնագիր:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԿՕՄԻՏԷԻ
ՆԻՍ N. 13

1921 թ. մարտի 9, Երևան

Բացակայում էին՝

Ե. Սարգսեան, Յ. Տէր-Յակովբեան, Հ. Սարգսեան, Կ. Սասունի:³⁶

Լսեցին.	Որոշեցին.
1. Ֆրօստ ³⁶ ինտելիգենտ ուժեր ուղարկելու հարցը:	1. Յանձնարարել Ներքին գործերի նախարարութեան տնային կօմիտէների միջոցաւ երկու օրւայ ընթացքում ուղարկել առնազն 100 հոգի քաղաքի ինտելիգենտ ոյժերից եւ հարուստների տղաներից ֆրօստի աշխատանքների համար:

32 Ռուսերեն՝ ծառայողների հաստիքացուցակ:

33 **Տիգրանյան Սիրական Թաղուսի** (1875, Գյումրի-?) – ազգային-պետական գործիչ, իրավաբան: ՀՅԴ անդամ: Եղել է Հայաստանի առաջին հանրապետության արտաքին գործերի նախարար, ապա՝ Խորհրդարանի փոխնախագահ: Խորհրդայնացումից հետո զբաղվել է գիտամանկավարժական գործունեությամբ:

34 **Դարբինեան Ռուբէն Ստեփանի** (Արտաշէս Չիլինգարյան) (4.02.1882, Ախալքալաք-14.06.1968, Բոստոն) – ազգային-պետական անվանի գործիչ, հրապարակախոս, խմբագիր: ՀՅԴ անդամ: Եղել է Հայաստանի առաջին հանրապետության արդարադատության նախարար: Խորհրդայնացումից հետո ձերբակալվել է: Ազատվել է Փետրվարյան ապստամբության շնորհիվ: 1922-ից «Հայրենիք» ամսագրի հիմնադիր-խմբագիրն էր:

35 Նման լեզուվ թերթ չի հրատարակվել:

36 Ռազմաճակատ:

2. Օրինագիծ Հ. Փ. Կ. արտակարգ ծախսերի համար վարկ բաց անելու մասին:	2. Բանալ Հ. Փրկութեան Կօմիտէին 100 միլիոն ռուբլի վարկ արտակարգ ծախսերի համար:
3. Օրինագիծ փոստ-հեռագրի և հեռախոսի ցանցի վարչութիւնների և նրանց ենթակայ հիմնարկութիւններին վարկ բաց անելու համար:	3. Հաստատել՝ առայժմ դուրս գցելով 3-րդ կետով պահանջած 60 միլիոն ռուբլին, բանալ ընդամենը 49 միլիոն ռուբլու վարկ:
4. Լիկվիդացիայի խնդիրը:	4. Մեծամասնական իշխանութեան օրով արտաքուսած պաշտօնեաներին տալ լիկվիդացիօն, իրենց գործող օրէնքներով: Մեր իշխանութեան կողմից հեռացած պաշտօնեաները ստանում են համաձայն մեր օրէնքների: Ռոճիկ տալ այն պաշտօնեաներին, որոնց վարիչները տալիս են հաւաստի տեղեկութիւններ նրանց ռոճիկ չստանալու մասին: Առաջարկել վարիչներին մի քանի օրուայ ընթացքում պարզել, թէ ինչքան պաշտօնեաներ չեն ստացել յունար, փետրուար ամսուայ ռոճիկներ, որից յետոյ միայն կարելի է տալ նրանց ռոճիկը:
5. Արդարադատութեան նախարարութեան աւանս տալու հարցը:	5. Տալ առայժմ 10 միլիոն: Չը տալ ռոճիկներ, լիկվիդացիան չը վճարել մինչև դատարանների վերակազմութեան հարցը: Վերջնական լուծումը: Այդ դէպքում տալ լիկվիդացիօն շտապից դուրս դուրս մնացող պաշտօնեաներին: Յանձնարարել Ա. Խոնդկարեանին ներկայացնել Հ. Փ. Կ. նախագիծ Արդարադատութեան նախարարութեան վերակազմութեան մասին:
6. Առաջարկ. թատերային և կոնցերտային գործը ենթարկել ազիտացիօն բաժնին և տրամադրել թատրոնական շէնքերը:	6. Թատ.ային] և կոնցերտային գործը կենտրոնացնել Ազիտացիօն բաժնում, տրամադրել քաղաքի երկու թատրոնական շէնքը:
7. Պետական պաշտօնեաների նիւթական վիճակը բարելաւելու հարցը:	7. Ընտրել յանձնախումբ, որը մշակելու է արագ կերպով պաշտօնեաների նիւթական դրութիւնը բարելաւելու ծրագիր: Յանձնախումբի նախագահ նշանակել Հ. Փ. Կ. ներկայացուցիչ և Ֆինանսների վարիչ Հ. Տէրտէրեանին, որը իր կազմը լրացնելու և մէկական ներկայացուցիչ [է] վերցնելու Պարենաւորման-Խնամատարութեան և Աշխատանքի նախարարութիւններից և մէկ ներկայացուցիչ արհեստակցական միութիւնից և Քաղաքապետարանից:
8. Գիւղաց. [իական] համագումար հրաւիրելու հարցը:	8. Յանձնարարել Ներքին գործերի նախարարութեան բերել այս առթիւ յաջորդ սիստին մշակած ծրագիր:

Հայրենիքի Փրկութեան Կօմիտէի նախագահ՝ Ս. Վրացեան [ստորագրություն]
Քարտուղար՝ Ս. Տէր-Թովմասեան [ստորագրություն]

ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 4, թթ. 36-2ըջ.; գ. 9, թթ. 36-37: Ձեռագիր: Բնագիր:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԿՕՄԻՏԷԻ
ՆԻՍՏ N. 14

ԱՐԽԻՎ

1921 թ. մարտի 11, Երևան
Բացակայում էին՝

Կ. Սասունի, Թ. Խանաղեան, Եփր. Սարգսեան, Յ. Տէր-Յակովբեան.³⁷³⁸³⁹

Լսեցին.	Որոշեցին.
1. Էջմիածնի Հ. Փ. Կոմիտէի դիմումը Յ. Յովհաննէսեանի ³⁷ եւ Եր. Տէր-Մինասեանի ³⁸ մասին:	1. Յ. Յովհաննէսեանին և Եր. Տէր-Մինասեանին ժամանակաորապէս հեռացնել իրենց վարած պաշտօններից, Երևանից ուղարկել յատուկ քննիչ նրանց գործը քննելու:
2. Քաղաքապետարանի հարցը:	2. Երևանից բացի միւս քաղաքներում առ այժմ չը վերականգնել քաղաքապետարանները: Քաղաքապետարանի գործերը յանձնել վարելու Հայրենիքի Փրկութեան կոմիտէին, որի անդամներից մէկը կգբաղւի յատկապէս քաղաքի գործերով:
3. Ծաղկաձորի Հ. Փ. Կ. դիմումը ջրաղացները տէրերին թողնելու մասին:	3. Հաստատել Ծաղկաձորի Հ. Փ. Կ. առաջարկը ջրաղացները տէրերին թողնելու. Պետական հացահատիկները պիտի աղացեն ձրի և առաջին հերթին, մասնաւորապէս համաձայն Հ. Փ. Կ. որոշման:
4. Արտակարգ Յանձնաժողովի հարցը:	4. Ներքին գործոց նախարարութեան ենթակա առանձնայատուկ բաժանմունքը վերացում է: Նրա իրաւունքները և գոյքը հանձնում են Արտակարգ Յանձնաժողովին: Արտակարգ Յանձնաժողովին առաջարկում է անմիջապէս ստանալ առանձնայատուկ բաժանմունքի հաշիւը եւ գործերը:
5. Կարիքաւոր ընտանիքների նպաստ տալու հարցը:	5. Հ. Փ. Կ. տրամադրութեան տակ դրում է տասը միլիոն ռուբլի ըստ նախագահի հայեցողութեան բաշխելու կարիքաւոր ընտանիքներին: Բանալ այս նպատակի համար 10 միլիոն ռուբլու վարկ Հ. Փ. Կ. անունով:
6. Հանրային կրթութեան և Արւեստի նախարարութեան հարցը:	6. Հանրային կրթութեան և Արւեստի նախարարութեան ընդհանուր վարիչի պաշտօնը յանձնել Արշ. Խոնդկարեանին:
7. Բամբակի մենաշնորհի հարցը:	7. Բոլշևիկեան կառավարութեան օրօք ժողովրդական տնտեսութեան խորհրդին (տովարիսոց ³⁹) յանձնած բամբակի մենաշնորհի վարչութիւնը կցել Ֆինանսների նախարարութեանը:
8. Վառելափայտի կենտրոնացման հարցը:	8. Վառելափայտի մատակարարումը և կենտրոնացումը յանձնարարել Պարենաւորման նախարարութեանը: Երկաթուղու համար անհրաժեշտ քանակութեանը փայտը պատրաստում է հաղորդակցութեան նախարարութիւնը: Յանձնարարել բոլոր վարիչներին ամենակարճ ժամանակամիջոցում ներկայացնել Պարենաւորման նախարարութեանը իրենց հիմնարկութիւնների տարեկան վառելափայտի մինիմում քանակի պահանջը: Լիազօրել Պարենաւորման նախարարութեանը պէտք եղած դէպքում տալ վարկեր առանձին նախարարութիւններին փայտի գնման համար, ստանալով Պարենաւորման նախարարութեան հրահանգները:

Տ. (ԺԳ) քաղի, թիվ 1 (49) հունվար-մարտ, 2015

Է. Կ. համահայկական հանդես

37 Հովանիսյան Հովհաննէս Մկրտչի (14.04.1864, Էջմիածին-29.09.1929, Երևան) – անվանի բանաստեղծ, թարգմանիչ: Դասավանդել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Ողջունել է խորհրդային կարգերի հաստատումը:

38 Տէր-Մինասյան Երվանդ Գալուստի (7.11.1879, գ. Հառիձ, ՀՀ Շիրակի մարզ-12.07.1974, Երևան) – անվանի հայագետ: Եղել է վարդապետ (1905-1910): 1921 թ. եղել է Էջմիածնի գիտական ինստիտուտի գիտական քարտուղար. 1943-1949 թթ.՝ ԵՊՀ օտար լեզուների ամբիոնի վարիչ, 1956-1970 թթ.՝ ՀՀ ԳԱԱ Լեզվի ինստիտուտի բառարանագրության բաժնի վարիչ:

39 Ռուսերեն – Совет народного хозяйства – Ժողովրդական տնտեսության խորհուրդ:

9. Պրոֆեսորներին ընդհանուր նորմայից դուրս մէկ անելորդ սենեակ տալու հարցը:	9. Տարածել Բնակարան.[ային] բռնագրաւման օրէնքի 11-րդ յօդ.ածի ծանօթութիւնը նաեւ պրոֆեսորների վրայ:
10. Մասնաւոր ջուլիականոցները տէրերին վերադարձնելու հարցը:	10. Ետ տալ տէրերին բռնագրաւած և ցուցակագրած մասնաւոր ջուլիականոցները:
11. Ժողովրդ.[ական] տնտեսութեան հարցը:	11. Յանձնարարել Հ. Տէրտէրեանին ամենակարճ ժամանակամիջոցում ներկայացնել գեկուցում ժողովրդական տնտեսութեան բաժանմունքի մասին:
12. Ուժեղ ռադիո-կայանի մասնագէտներին մթերքներով օժանդակելու հարցը:	12. Յանձնարարել Հաղորդակցութեան նախարարութեան անմիջապէս միջոցներ ձեռք առնել Ուժեղ-ռադիոի մասնագէտ ծառայողներին և նրանց ընտանիքներին մթերքներով բաւարարելու:

Հայրենիքի Փրկութեան Կօմիտէի նախագահ՝ Ս. Վրացեան [ստորագրություն]
Քարտուղար՝ Ս. Տէր-Թովմասեան [ստորագրություն]

ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 4, թթ. 43-2րջ.; գ. 9, թթ. 44-45; գ. 11, թթ. 12-2րջ., 13:
Ձեռագիր: Բնագիր:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԿՕՄԻՏԷԻ
ՆԻՍ N. 15

1921 թ. մարտի 14, Երևան
Բացակայում էին՝
Յ. Տէր-Յակովբեան, Եփ. Սարգսեան և Կ. Սասունի:

Լսեցին.	Որոշեցին.
1. Զօրակոչի հարցը:	1. Երևանում, Աշտարակում և Էջմիածնում յայտարարել 20-32 տարեկանների զօրակոչ: Զօրակոչին ենթարկեալները պարտաւոր են ներկայանալ իրենց գէնքով և 3 օրապ հացով:
2. Հրահանգներ Հ. Փ. Կ.:	2. Համաձայն Հ. Փ. Կ. N. 1 հրամանի Հ. Փ. Կ. հանդիսանում է երկրի գերագոյն իշխանութիւնը: Շրջանների ղեկավար իշխանութիւնը հանդիսանում է շրջանային եւ գիւղերում գիւղական Փ. Կօմիտէները: Այս հիմունքներով գիւղական Փրկութեան Կօմիտէները ղեկավարում եւ հաստատում են Փրկ.[ութեան] Շրջանային կօմիտէների եւ շրջ.[անային] կօմիտէները Հայրենիքի Փրկութեան կօմիտէի կողմից:
3. Հայր.[ենիքի] Փրկ.[ություն] Կօմիտէի Պրեզիդիումի ⁴⁰ հարցը:	3. Ընտրել պրեզիդիում 5 հոգուց բաղկացած, որը հանդիսանում է գերագոյն գործադիր իշխանութիւն Հ. Փ. Կ.: Պրեզիդիումի կազմը որոշում է Հ. Փ. Կ. նախագահը: Հ. Փ. Կ. նախագահի կողմից Պրեզիդիումի կազմի մէջ մտնում են. Նախագահ - Ս. Վրացեան, Զինւ.[որական] գործերի վարիչ, Պարենաւորման [գործերի] վարիչ, Ներք.[ին] գործ.[երի] վարիչ և Արտակարգ Յանձնաժողովի նախագահը: Հ. Փ. Կ. ազատ անդամներից՝ Ա. Խոնդկարեանը, Հ. Տէր-տէրեանը եւ Յ. Տէր-Յակովբեանը գործում են Ղամարլուի ⁴¹ ֆրօնտում, որպէս Հ. Փ. Կ. ներկայացուցիչներ:
4. Պարենաւորման նախարարի առաջարկը դրամական գործառնութիւնը գանձարանից վերցնելու մասին:	4. Լիազօրել Պարենաւորման նախարարութեանը հացի գնման 500 միլիոն ռուբլի վարկից ստանալ միանազ 250 միլիոն ռուբլի ընթացիկ հաշուով: Արագացումը յանձնարարել Ֆինանսների նախարարութեանը:

Հայրենիքի Փրկութեան Կօմիտէի նախագահ՝ Ս. Վրացեան [ստորագրություն]

40 Նախագահություն:

41 Այժմ՝ ՀՀ Արարատի մարզի Արտաշատ քաղաքը:

Քարտուղար՝ Ս. Տէր-Թովմասեան [ստորագրություն]
 ՀԱԱ, Ֆ. 37, ց. 1, գ. 4, թթ. 41-շրջ.; գ. 9, թթ. 52 և շրջ.: Ձեռագիր: Բնագիր:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԿՕՄԻՏԷԻ
 ՆԻՍՏ N. 16

1921 թ. մարտի 16, Երևան
 Բացակայում էին՝
 Յ. Տէր-Յակովբեան, Հ. Տէրտէրեան, Ա. Խոնդկարեան, Կ. Սասունի:

ԱՐԽԻՎ

Լսեցին.	Որոշեցին.
1. Անտոկոս սպիրտ գնելու և պատրաստելու համար հաղորդակցության նախարարությանը վարկ բաց անելու հարցը:	1. Բանալ Հաղորդակցության նախարարության անունով (150) հարիւր յիսուն միլիոն ռուբլի վարկ անտոկոս սպիրտ գնելու եւ պատրաստելու համար:
2. Շուկայի հարցը:	2. Կնքած պահեստների ապրանքները յանձնում են Պարենաւորման նախարարութեանը, որի արժէքը վճարում է տէրերին պետական գներով: Գրաւելիք պահեստները որոշում է Պարենաւորման նախարարութեան և Արտակարգ Յանձնաժողովի կողմից:

Հայրենիքի Փրկութեան Կօմիտէի նախագահ՝ Ս. Վրացեան [ստորագրություն]
 Քարտուղար՝ Ս. Տէր-Թովմասեան [ստորագրություն]

ՀԱԱ, Ֆ. 37, ց. 1, գ. 4, թթ. 39; գ. 9, թ. 67: Ձեռագիր: Բնագիր:

ՆԻՍՏ N. 17

1921 թ. մարտի 22, Երևան
 Ներկայ էին՝
 Ս. Վրացեան - Նախագահ, Արտ.[աքին] գործ.[երի] եւ Գիւղ.[ատնտեսության]
 նախ.[արարությունների] վարիչ,
 Ա. Օհանջանեան - Հաղորդակցության [նախարարության] վարիչ,
 Վ. Մինախորեան - Պարենաւորման [նախարարության],
 Ա. Մաքսապետեան - Անդամ Հ. Փ. Կ.,
 Ս. Մեսրոպեան -,
 Յ. Բուդաղեան -,
 Ս. Մելիք-Եօլջեան -

Է (ժ-Գ) քաարի, թիվ 1 (49) հունվար-մայր, 2015

Լսեցին.	Որոշեցին.
1. Աշխատանքի նախարարութեան օրինագիծը պետական ծառայողների մարտ ամսւայ ռոճիկների մասին:	1. Հաստատել փոփոխութիւններով:
2. Մամուլի և պրօպագանդային վարչութեանը ընթացիկ ծախսերի համար վարկ բաց անելու մասին:	2. Բանալ Մամուլի և պրօպագանդային վարչութեան վարիչի անունով ընթացիկ ծախսերի համար ընթացիկ հաշուվ երեք (3) միլիոն ռուբլի վարկ:
3. Ճարտարապետական վարչութեանը վարկ բաց անելու հարցը:	3. Բանալ Ճարտարապետական վարչութեան ծախսերի համար քսան (20) միլիոն ռուբլու վարկ:
4. Խճուղիների և ճանապարհների վարչութեանը վարկ բաց անելու օրինագիծ:	4. Բանալ (65) վաթսուն հինգ միլիոն ռուբլու վարկ:

Վէ՛ւ հասանալկական համրեւ

5. Օրինագիծ երկաթուղային վարչութեանը վարկ բաց անելու մասին:	5. Բանալ երկաթուղային վարչութեանը իննսուն մէկ (91) միլիոն թուրքու վարկ:
6. Առաջարկ Պարլամէնտի նոր շէնքը բնակչութիւնից ազատելու մասին:	6. Առաջարկել գինորական իշխանութեանը հեռացնել այդ շէնքից գորամասերը և արգելել նոր մասերի բնակութիւնը:
7. Առաջարկ գարաժի բանօրններին հաց տալու մասին:	7. Տալ Պարենաւորման նախարարութիւնից գարաժի բանօրններին մէկական ֆունտ ⁴² հաց:
8. Առաջարկ. 32 տարեկանից վեր կամաւոր գինորներին նպաստ տալու հարցը:	8. 32 տարեկանից վեր այն կամաւոր գինորները, որոնք առնուազն մէկ ամիս ծառայել են և գործել ֆրոստում, ստանում են (50.000) յիսուն հազար թուրքի: Նոյն պայմաններում գտնուող հրամանատարական կազմը ստանում է կրկնակի: Բանալ այդ նպատակի համար Հ. Փ. Կօմիտէի անունով հարիւր (100) միլիոն թուրքի վարկ:
9. Փ.[ոխ] տեղակալ Դուրկերեանի դիմումը իրեն նպաստ տալու մասին:	9. Տալ նպաստ Հ.[այրենիքի] Փրկութեան Կօմիտէի անունից:
10. Հաղորդակցութեան նախարարութեան առաջարկը շինարարական նիւթերի բռնագրամման մասին:	10. Մերժել:
11. Գլխ.[ավոր] Զինորական Շտաբի առաջարկը Համբարակային վարչութեան շուկայի գներով միս և գարի գնելու թոյլտւութեան մասին:	11. Սնի նկատմամբ տալ սկզբունքային համաձայնութիւն, սկստի ունենալով պարենաւորման ներկայ շրջանի առանձնայատուկ պայմանները: Միանգամայն միջոցներ ձեռք առնել, Գիւղատնտեսութեան [և պետական գոյքերի] նախարարութեան ունեցած մսացու կենդանիներից տրամադրել գինորական իշխանութեան մի որոշ մաս:
12. Օրինագիծ Աւտօ-տրանսպօրտի վարչութեանը վարկ բանալու մասին:	12. Բանալ Աւտօ-տրանսպօրտի վարչութեանը քսան ութ (28) միլիոն թուրքու վարկ:
13. Օրինագիծ Խնամատարութեան նախարարութեանը վարկ բանալու մասին:	13. Բանալ Խնամատարութեան նախարարութեանը յիսուն (50) միլիոն թուրքու վարկ: Պահանջել Խնամատարութեան նախարարութեան ներկայացնել պատճառաբանած նախահաշիւ:
14. Արդարադատութեան նախարարութեան դիմումը նախկին Գերագոյն Տրիբունալի ծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին հացադրամ տալու մասին:	14. Յանձնարարել Արտակարգ Յանձնաժողովի եզրակացութեանը:
15. Պարոյր Բաբախանեանի դիմումը իրենից գրաւած փայտի գինը 6.000 թուրքի նշանակելու մասին:	15. Թողնել անհետևանք:
16. Կառավարութեան կազմի մէջ թուրք ներկայացուցիչներ մտցնելու հարցը:	16. Հ. Փ. Կօմիտէն անհրաժեշտ է գտնում վարիչների օգնականի հանգամանքով մտցնել կառավարութեան մէջ թուրք անհատներ: Առաջին հերթին ընտրել Ներքին գործերի և Պարենաւորման նախարարութեան մէջ:
17. Համաժողով համագումարի յետաձգման հարցը:	17. Համագումարը յետաձգել մի քանի օրով, հրահանգել շրջ.[աններում] ընտրել ներկայացուցիչներ և սպասել համագումարի համար տրւելիք հրահանգին:
18. «Արամազդ» ծխախոտի գործարանի հարցը:	18. Յետաձգել առ այժմ:

⁴² Զանգվածի միավոր, հավասար է մոտ 4,5 կիլոգրամի:

<p>19. Պարենաւորման նախարարութեան լիկվիդացիայի հարցը:</p>	<p>19. Հաստատել: Սերմանման բաժանմունքը անջատել Պարենաւորման նախարարութիւնից և միացնել Գիւղ.[լատնտեսության] եւ Պետ.[ակն] գոյքերի նախարարութեանը: Սերմանման բաժնի պահեստներում գտնուած գարին թողնում է Պարենաւորման նախարարութեան գինւորական կարիքների համար:</p>
<p>20. Ամերիկեան կոմիտէի դիմումը նրանց ծառայողներին ևս պետական ծառայողների հաշուով մթերքներ տալու մասին:</p>	<p>20. Մերժել, տալ գինի, եթէ կլինի այդ մասին պահանջ:</p>
<p>21. Պարենաւորման նախարարութեանը հացի գնման 500 միլ.[իոն] ռուբլու վարկի մնացորդը 100 միլ.[իոն] ռուբլու ընթացիկ հաշուով տրելու առաջարկը:</p>	<p>21. Պարենաւորման նախարարութեանը թոյլատրում է ստանալ հացի գնման 500 միլ.[իոն] ռուբլի վարկի մնացորդից 100 միլ.[իոն] ռուբլի ընթացիկ հաշուով, առանց նախնական վերատուգման Պետական կօնտրոլի կողմից:</p>
<p>22. «Սագօ» ընկերութեան ապրանքների գնման յանձ.նարարվելիք պայմանների քննութիւնը:</p>	<p>22. Հաստատել հետևեալ կէտերը. Ա) Հ. Փ. Կօմիտէն թոյլատրում է «Սագօ» ընկերութեանը արտահանել այժմ իւր պահեստներում եւ վազոնում ունեցած գորգերը, կաշիները եւ մթերքները, որոնք կառավարութեան կողմից արդեն գնահատուած են եւ հաշի են առնուած: Արտահանման հետ կապուած տուրքը անբողջովին ընկնում է «Սագօ» ընկերութեան վրայ, իսկ Հ. Փ. Կօմիտէն միմիայն ցոյց է տալիս հնարաւոր աջակցութիւն: Բ) «Սագօ» ընկերութեան ներմուծած բոլոր ապրանքները, որոնք այժմ գտնուում են Երեսնում, անցնում են Հայաստանի կառավարութեանը ֆակտուրայի գներով՝ հաշուելով ֆրանկը առ առաւելն 1.500 ռուբլի հայկական չէկերով, Գ) Մինչեւ այժմ կառավարութեան հետ ունեցած հաշիների եւ Ալեք-Պօլում տեղի ունեցած կորուստների համար «Սագօ» ընկերութիւնը հրաժարում է ամեն մի պրետենզիայից առ Հայաստանի կառավարութիւնը:</p>
<p>23. Վարկեր արագ ստանալու համար Պետական կօնտրոլի կանոններ մշակելու հարցը:</p>	<p>23. Ընտրել այդ նպատակի համար Յանձնախումբ՝ կազմուած Պարենաւորման, Հաղորդակցութեան նախարարութիւններից եւ Պետական կօնտրոլից:</p>

Հայրենիքի Փրկութեան Կօմիտէի նախագահ՝ Ս. Վրացեան [ստորագրություն] Քարտուղար՝ Ս. Տէր-Թովմասեան [ստորագրություն]

ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 5, թթ. 41-2րջ.; 42-2րջ.; 67-2րջ., 68-2րջ.; գ. 9, թթ. 96-98: Ձեռագիր: Բնագիր:

ՆԻՍ N. 18

- 1921 թ. մարտի 23, Երևան
 Ներկայ էին՝
 Ս. Վրացեան – Արտ.[աքին] եւ Գիւղ.[լատնտեսության] նախ.[արարությունների] [գործերի] վարիչ,
 Ա. Յովհաննէսեան – Զինւորական գործերի վարիչ,
 Ս. Մելիք-Եօյչեան – Ներքին գործ.[երի] նախ.[արարության] վարիչի օգնական,
 Ա. Օհանջանեան – Հաղորդակցութեան
 Յ. Բուդաղեան – Անդամ Հ. Փ. Կ.,
 Յ. Տէր-Յակովբեան –

- Ս. Մերոպեան –.....,
 Ա. Մաքսապետեան –
 Վ. Մինախորեան – Պարենաւորման նախարարութեան վարիչ,
 Ս. Տէր-Թովմասեան – Քարտուղար:

Լսեցին.	Որոշեցին.
1. Հ. Փ. Կ. նախագահի առաջարկը Պարենաւորման եւ Խնամատարութեան նախարարութեանը 2-րդ օգնականների պաշտօնը հաստատելու մասին:	1. Հաստատել:
2. Հ. Փ. Կ. նախագահի առաջարկը Ներքին գործոց նախարարութեան օգնականի պաշտօնին հրաւիրել Հուսէին Բէկ Կազիեիին:	2. Հաստատել:
3. Հ. Փ. Կ. նախագահի առաջարկը Պարենաւորման նախարարի 2-րդ օգնականի պաշտօնին հրաւիրել Միր Բաշիր Միր Բաբաեիին:	3. Հաստատել:
4. Հ. Փ. Կ. նախագահի առաջարկը Խնամատարութեան նախարարի 2-րդ օգնականի պաշտօնին հրաւիրել Աշրամ Բէկ Կազիեիին:	4. Հաստատել:
5. Հ. Փ. Կ. նախագահի առաջարկը Էջմիածնի շրջանի թուրք գաղթականութեանը սերմանման օժանդակութիւն ցոյց տալու համար վարկ բաց անելու մասին:	5. Բանալ այդ նպատակի համար Ներքին գործոց նախարարութեանը հինգ (5) միլիոն ռուբլի վարկ:
6. Հ. Փ. Կ. նախագահի առաջարկը Զանգիբասարի շրջանի թուրք գաղթականութեանը սերմանման օժանդակութիւն ցոյց տալու համար վարկ բաց անելու մասին:	6. Բանալ այդ նպատակի համար Ներքին գործոց նախարարութեանը հինգ (5) միլիոն ռուբլի վարկ:
7. Զինուորական նախարարի անունով (500) միլիոն ռուբլի վարկ բաց անելու մասին:	7. Բանալ Զինուորական նախարարութեան անունով հինգ հարիւր միլիոն (500.000.000) ռուբլի վարկ, մինչև Զինուորական նախարարութեան նախահաշիւը հաստատելը: Զինուորական նախարարութեան նախահաշիւը քննելու համար կազմել հանձնաժողով՝ կազմած Պարենաւորման, Զինուորական նախարարութիւնների մէկական ներկայացուցիչներից եւ Հ. Փ. Կ. անդամներ Յ. Բուդաղեանից եւ Ա. Մաքսապետեանից:
8. Տաճկաստան եւ Ռուսաստան արտորած զինուորականների ընտանիքների նպաստի հարցը:	8. Յանձնել Խնամատարութեան նախարարութեանը:

Հայրենիքի Փրկութեան Կօմիտէի նախագահ՝ Ս. Վրացեան [ստորագրություն]
 Քարտուղար՝ Ս. Տէր-Թովմասեան [ստորագրություն]

ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 4, թթ. 47-շրջ.; գ. 9, թթ. 99 և շրջ.: Ձեռագիր: Բնագիր:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԿՕՄԻՏԷԻ
ՆԻՍՏ N. 19

ԱՐԽԻՎ

1921 թ. մարտի 26, Երևան
Բացակայում էին՝

Կ. Սասունի, Հ. Տէրտէրեան, Յ. Տէր-Յակովբեան, Ա. Խոնդկարեան, Եփ. Սարգսեան, Հ. Սարգսեան:

Լսեցին.	Որոշեցին.
1. Ժողովրդական տնտեսության բաժանմունքի լիկլիդացիայի հարցը:	1. Յանձնարարել Ա. Օհանջանեանին ներկայացնել ժողովրդական տնտեսական [ույթյան] բաժանմունքի մասին մշակված զեկուցում:
2. Քաղաքապետարանի առաջարկը բժ. Յ. Տէր-Սիբայէլեանին քաղաքապետարանի անդամ նշանակելու մասին:	2. Քաղաքապետարանի անդամ նշանակել քաղաքացի թուրքերից մէկին:
3. Քաղաքապետարանի առաջարկը կիսաքանդ տների վերանորոգման համար 150 միլիոն ռուբլի վարկ բանալու մասին:	3. Յետաձգել:
4. Օրինագիծ գին.[վորական] ձևի կոշիկների կոշկակարանոցի ծախսերի համար վարկ բանալու մասին:	4. Բանալ յիսուն ինը միլիոն երեք հարիւր երեսուն հինգ հազար (59.335.000) ռուբլի վարկ:
5. Օրինագիծ Խնամատարության նախարարության վարկ բանալու մասին:	5. Յանձնարարել Ա. Սաքսապետեանին ծանօթանալ Խնամատարության նախարարության գործերի եւ ներկայացւած նախահաշիվի հետ, եւ ներկայացնել զեկուցում:
6. Օրինագիծ Հաղորդակցության նախարարության էլէքտրական կայանների համար վարկ բանալու մասին:	6. Բանալ քսան միլիոն (20.000.000) միլիոն ռուբլու վարկ:
7. Օրինագիծ Ռադիո-Կայանի գործառնության ծախսերի համար վարկ բանալու մասին:	7. Բանալ տասն և չորս միլիոն (14.000.000) ռուբլու վարկ:
8. Վարկերը արագ ստանալու հարցը ⁴³ :	8. Պատերազմական գործողութիւնների ընթացքում ցնոր կարգադրութիւն Հ. Փ. Կ. նախագահի վաւերացումով թոյլատրում է առանձին նախարարութիւններին բացւած վարկերը ստանալ դեռ առաջին վարկերի հաշիւները չներկայացրած:
9. Զինուորական նախարարութեանը վարկ բանալու մասին:	9. Բանալ Զինուորական նախարարութեանը ևս (100.000.000) հարիւր միլիոն ռուբլի վարկ:

հունվար-մայր, 2015
Է (ժ-Գ) քաղի, թիվ 1 (49)

Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի նախագահ՝ Ս. Վրացեան [ստորագրություն]
Քարտուղար՝ Ս. Տէր-Թովմասեան [ստորագրություն]

ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 4, թթ. 48-շրջ.; գ. 9, թթ. 100 և շրջ., 101: Ձեռագիր: Բնագիր:

Վէ՛մ համահայկական հանդես

43 8-րդ և 9-րդ կետերն ընդունվել են նույն օրվա նիստում լրացուցիչ որոշմամբ:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԿՕՄԻՏԷԻ
ՆԻՍՏ N. 20

1921 թ. մարտի 28, Երևան
Բացակայում էին՝

Յ. Տէր-Յակովբեան, Հ. Տէրտէրեան, Ա. Խոնդկարեան, Կ. Սասունի, Եփ. Սարգսեան, Հ. Սարգսեան, Թ. Խանաղեան:

Լսեցին.	Որոշեցին.
1. Հացադրամներ վճարելու ձևի մասին:	1. Հացադրամները տրուում են պաշտօնեաների ընտանիքների այն անդամներին, որոնք ապրում են Հայաստանի սահմաններում և անպայման նրա հոգատարութեան տակ:
2. Օրինագիծ Աշխատանքի նախարարութեան վարկ բանալու մասին:	2. Պահանջել մշակուած նախահաշի:
3. Օրինագիծ Ներքին գործոց նախարարութեան վարկ բանալու մասին:	3. Տալ առ այժմ հարիւր յիսուն միլիոն ռուբլի: Պահանջել ապրիլ ամսւայ նախահաշի:
4. Օրինագիծ քաղաքի սանիտարական դրութիւնը բարելաւելու համար քաղաքապետարանին վարկ բանալու մասին:	4. Բանալ քաղաքապետարանին մի ամսւայ համար քառասուն երկու միլիոն ռուբլի: Առաջարկել Պարենաւորման նախարարութեանը տրամադրելու Քաղաքապետարանին նոյն նպատակի համար օրական 1/2 փութ հաց: Առաջարկել Քաղաքապետարանին բանուղական ուժի փոխարեն օգտագործել գերիներին:
5. Երկրագործ ⁴⁴ [ույթյան] և Պետական գոյքերի նախ. [արարության] նախահաշիւը մկնդելի թթւոյթ պատրաստելու մասին:	5. Հաստատել: Բանալ Գիւղ. [ստնտեսության] և Պետ. [ական] գոյքերի նախարարութեանը այդ նպատակի համար 4 միլիոն ռուբլի վարկ:
6. Օրինագիծ Հաղորդակ. [ցության] նախ. [արարութեան] եանը ապրիլ ամսւայ համար վարկ բանալու մասին:	6. Բանալ Հաղորդակցութեան նախարարութեանը ապրիլ ամսւայ համար 76.000.000 ռ. [ուբլի] վարկ:

Հայրենիքի Փրկութեան Կօմիտէի նախագահ՝ Ս. Վրացեան [ստորագրութիւն]
Քարտուղար՝ Ս. Տէր-Թովմասեան [ստորագրութիւն]

ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 4, թթ. 49; գ. 9, թթ. 130 և շրջ.: Ձեռագիր: Բնագիր:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԿՕՄԻՏԷԻ
ՆԻՍՏ N. 21

1921 թ. մարտի 29, Երևան
Բացակայում էին՝

Յ. Տէր-Յակովբեան, Հ. Տէրտէրեան, Ա. Խոնդկարեան, Եփ. Սարգսեան, Հ. Սարգսեան, Ռ. Քաջբերունի, Թ. Խանաղեան, ԲԺ. Եղիազարեան:

Լսեցին.	Որոշեցին.
1. Օրինագիծ Հանրային կրթութեան և Արւեստի նախարարութեանը վարկ բանալու մասին:	1. Տալ առ այժմ յիսուն միլիոն ռուբլի: Պահանջել նախահաշի լրիվ բացատրութիւններով:
2. Օրինագիծ Ֆինանսների նախարարութեանը լրացուցիչ վարկ բանալու մասին:	2. Բանալ Ֆինանսների նախարարութեանը քսան միլիոն (20.000.000) ռուբլի վարկ:

Հայրենիքի Փրկութեան Կօմիտէի նախագահ՝ Ս. Վրացեան [ստորագրութիւն]
Քարտուղար՝ Ս. Տէր-Թովմասեան [ստորագրութիւն]

ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 4, թ. 50; գ. 9, թ. 131: Ձեռագիր: Բնագիր:

⁴⁴ Նոյն Գյուղատնտեսության նախարարութիւնն է:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԿՕՄԻՏԷԻ
ՆԻՍՏ N. 22

ԱՐԻԿՎ

1921 թ. մարտի 31, Երևան
Բացակայում էին՝

Յ. Տէր-Յակոբեան, Ա. Խոնդկարեան, Եփր. Սարգիսեան, Հ. Սարգիսեան. Թ. Խանադեան, Ռ. Քաջերունի, Կ. Սասունի:

Լսեցին.	Որոշեցին.
1. Օրինագիծ Ժողովրդական տնտեսութ. [յան] Գերագոյն Խորհրդին [մեկ անընթեռնելի բառ] համար վարկ բանալու մասին:	1. Բանալ Ժողովրդական տնտեսութ. [յան] Գերագոյն Խորհրդին [մեկ անընթեռնելի բառ] պահպանման համար (60.000.000) վաթսուն միլիոն ռուբլ. [ի] վարկ:
2. Օրինագիծ Ժողովրդ. [ական] տնտեսութեան Խորհրդին վարկ բանալու մասին:	2. Բանալ Ժողովրդ. [ական] տնտեսութ. [յան] Գերագոյն Խորհրդին ընթացիկ ծախսերի և լիկվիդացիայի համար երեսուն միլիոն (30.000.000) ռուբլի վարկ:
3. Օրինագիծ Մամուլի և պրոպագանդայի վարչիչն ընթացիկ ծախսերի համար վարկ բանալու մասին:	3. Բանալ Մամուլի և պրոպագանդայի վարչիչն անունով, ընթացիկ ծախսերի համար տասը միլիոն (10.000.000) ռուբլ. [ի] վարկ:
4. Օրինագիծ Աշխատանքի նախարարութեան ապրիլ ամսւայ վարկ բանալու մասին:	4. Բանալ ապրիլ ամսուայ համար տասը (10.000.000) միլիոն ռուբլի վարկ:
5. Ներք. [ին] գործոց նախարարութեան դիմումը Երևանի Կենտր. [ոնական] տնային կօմիտէին վարկ բանալու մասին:	5. Տալ Ներք. [ին] գործ. [ոց] նախարարութեան միջոցով տասն և հինգ միլիոն (15.000.000) ռուբլի, որպէս նպաստի գումար: Գումարը գործադրել թիկունքային աշխատանքների համար: Տալ նպաստ միայն չքաւոր քաղաքացիներին: Ռոճիկ ստացողները նպաստ չեն ստանում:
6. Օրինագիծ Արդարադատ. [ույթան] նախարարութեան վարկ բանալու մասին:	6. Բանալ Արդար. [ադատութեան] նախարարութ. [յան] մարտի մնացած և ապրիլ ամիսների ծախսերի համար եօթ միլիոն (7.000.000) ռուբլի վարկ:
7. Օրինագիծ Քաղաքապետարանի ընթացիկ ծախսերի և բանջարանոցի համար վարկ բանալու մասին:	7. Բանալ Քաղաքապետարանի ընթացիկ ծախսերի և բանջարանոցի համար յիսուն միլիոն (50.000.000) ռուբլի վարկ: Պահանջել նախահաշիվ:
8. Օրինագիծ Խնամատարութեան նախարարութեան գերւած և արքորւած զինուորակ. [անների] ընտանիքներին նպաստ տալու մասին:	8. Բանալ Խնամատ. [արութեան] նախարարութեան այդ նպատակի համար հարիւր երեսուն միլիոն երեք հարիւր յիսուն հազար (130.350.000) ռուբլի վարկ: Տալ այդ գումարը գերւած եւ արքորւած զինուորականների ընտանիքներին ապրիլ ամսւայ համար, որպէս միանւագ նպաստ:
9. Օրինագիծ Հաղորդակցութեան նախարարութեան տեխնիկական դասընթացների համար վարկ բանալու մասին:	9. Բանալ այդ նպատակի համար (25.245.400) քան և հինգ միլիոն երկու հարիւր քառասուն և հինգ հազար չորս հարիւր ռուբլի:
10. Օրինագիծ Պարենաւորման Նախարարութեան Ժամանակաւոր ծախսերի համար վարկ բանալու մասին:	10. Բանալ Պարենաւորման նախարարութեան երկուս և կէս միլիարդ ռուբլի վարկ:
11. Օրինագիծ Խնամատարութեան նախարարութեան Աշտարակի որբանոցների բանջարանոցի համար վարկ բանալու մասին:	11. Ստանալ Գիւղատնտեսութեան [և պետական գույքերի] նախարարութիւնից: Չլինելու դէպքում վարկ պահանջել Պարենաւորման նախարարութիւնից:

Է (ԺԳ) քաղի, թիվ 1 (49) հունվար-մարտ, 2015
Վէլ համահայկական հանդես

12. Ներք.[ին] գործ.[ոց] նախարարության դիմումը բժիշկների մասին 1920 թի օգոստ.[ոսի] 18-ի մօբիլիզացիայի օրէնքը պահելու համար:	12. 1920 թի օգոստ.[ոսի] 18-ի օրէնքը թողնել իր ուժի մեջ:
13. Ներք.[ին] գործ.[ոց] նախարարության դիմումը՝ թոյլ տալու ձիաոր միլիցիոներներին ձիու կերի համար օրական 1.000 ռուբլի տալու մասին:	13. Ապրիլ ամսւայ համար արտօնել Ներք.[ին] գործ.[ոց] նախարարության տալ իր վարկերից:
14. Աշտարակի Փրկութեան Կօմիտէի դիմումը ժամանակաւորապէս Օշական և Կզլթամուր գիւղերը իրենց շրջանին միացնելու համար:	14. Ժամանակաւորապէս միացնել Աշտարակին և հաղորդել այս մասին Էջմիածնի Փրկութեան Կօմիտէին:

Հայրենիքի Փրկութեան Կօմիտէի նախագահ՝ Ս. Վրացեան [ստորագրություն] Քարտուղար՝ Ս. Տէր-Թովմասեան [ստորագրություն]

ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 9, թթ. 135-շրջ., 136: Ձեռագիր: Բնագիր:

Անահիտ 2. Քոչարյան – Գիտական հետաքրքրություններն ընդգրկում են սփյուռքահայ գաղթօջախների պատմության և արդի վիճակի, ինչպես նաև Արցախում կրթական գործի պատմության հիմնահարցերը:



Հայաստանի փրկութեան կոմիտէի բանակի հրամանատարական կազմը

Հայրենիքի պարտեզի ցանկ

թիվ 1.

Հիմնական

1. Արևիկա Հայրենիք
2. Վարդ Մանուկյան
3. Երվանդ Մանուկյան
4. Գրիգոր Ներսիսյան
5. Կարենյան Ներսիսյան
6. Քոչարյան Կարենյան
7. Կարճ Մանուկյան
8. Մանուկ Ծամբալ
9. Գր. Երևանյան.

1. Կարենյան Ներսիսյան - Մանուկյան

1. այն պարտեզի անդամները, որոնք պարտեզի անդամներն են և որոնք հայրենիքի անդամներն են:

2) Կարենյան Ներսիսյան և Կարենյան Ներսիսյան խումբի անդամները:

Հայրենիքի պարտեզի ցանկի համար 2015 թվականի հունիսի 1-ին:

2) Արևիկա խումբի անդամները և Կարենյան Ներսիսյան խումբի անդամները:

Կարենյան Ներսիսյան խումբի անդամները:

3. Կարենյան Ներսիսյան խումբի անդամները:

4. Կարենյան Ներսիսյան խումբի անդամները:

5. Կարենյան Ներսիսյան խումբի անդամները:

6. Կարենյան Ներսիսյան խումբի անդամները:

7. Կարենյան Ներսիսյան խումբի անդամները:

8. Կարենյան Ներսիսյան խումբի անդամները:

9. Կարենյան Ներսիսյան խումբի անդամները:

10. Կարենյան Ներսիսյան խումբի անդամները:

Հայրենիքի պարտեզի ցանկի համար 2015 թվականի հունիսի 1-ին

ՀՀ Կարենյան Ներսիսյան խումբի անդամները

ՀՀ Կարենյան Ներսիսյան խումբի անդամները